

1391-6

ՔԱՂԱՔ. ԼՈՒՍ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲԵՆ. ԳՅՈՒՋ. ԳԵՎԵՐ. ԳՐԵԴԱՐԱՆ

ԾՐԱՔՈ

ՕՀԵԶՐԵ ՆԱՐԴՈ

ՊՈ.ՏԱՐԱՎ.Ա.ՄԻՔԱՆ

Տիկին

ՅԵՐԵՎԱՆ - ՊԵՏԵԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ - 1928

ԲԱՆ-ԳՅՈՒՆ ԳԵՂԱՐՎԵԱԾ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԱԳԱ

ԱԼՎԱՆԻՔ

(Պ. Ա. Տ. Մ. Ա. Վ. Ք.)

A 1/8094

ՆԱՐԴՈ

(Հրահանգչութեալ պատմածից)



ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵԱԿ. Ա. Ե.

ԱԼՎԱՆԵ

I

Գարնան արել նոր նոր թեքվում եր...
Գյուղում եղ մի ճամբեն եր լայն ու յերկար,
վորի մի ծայրը ցած եր իջնում մինչև ժամի
տակը, կամ գեղի «ներքին» ձկուտը»:

Ճամբի յեզրերով վազում եր խշշան ա-
ռուն ու իր ջրերում փախցնում եր արեի կար-
միր շողերը:

Քեղջկուհին ցայում եր պարզ ջրերում հանդ-
վորի գուլպաները: Նրա կողքին պազել եր փոք-
րիկ տղան ու խաղում եր ավաղի հետ:

Զուր խմելու յեկան բանթող յեղած յեր-
կու լծկաններ: Յերեխան քարեր եր շպրտում
նրանց վրա:

Յեզները դռւնչները բարձրացնում եյին ու
ապուշ ապուշ նայում տղային:

Նույն ճամբին, Դուկաս ապնի քանդված
զոմի գերանների վրա նստուել եյին մի խումբ
կոմյերիտականներ: Նրանց աղմուկը բռնել եր
վերի թաղը:

Սաքոն, վոր առույգ ու կարմրերես կոմ-
յերիտական եր, հանկարծ շվացրեց.

— Բնկերներ, ճամբաւ տվեք Զանունց բի-
քիրին:

Զանունց քիքիրը, փեշերը հավաքած, տոպ-
րակը ձեռին՝ գնում եր՝ դեպի խանութը:
—Ե՛, չելավ քիքիր,—բղավեցին տղերը:
Քիքիրը շփոթված կանգնեց:

—Ա՛ ջահելներ, խի յեք պառավիս շշկաց-
նում, ախր գուազ եմ: Մեր հայը քեֆ չունի,
շաքար ու չայ եմ առնելու, տանեմ տաք-տաք
չայ տամ՝ բարքի քրտնի:

—Քիքիր, ճամբեն դեսը չի: Հրեն կոռպեր-
ատիվը, — Սաքոն բռնեց նրա լեզոց ու մատով
ցույց տվեց դիմացի կոռպերատիվը:

—Պառավ կնիկ եմ, յես ինչ դիտամ վորն
ալավ, վորը վատ: Արեսերդապրի, ենտեղ եժան
են տալին, — հարցըց քիքիրն ու քայլերն ուղղեց
դեպի կարմիր դռներով կոռպերատիվը:

—Հա, հա եժան ու լավ, Զանունց քիքիր:
Մի քանի ամիս եր, ինչ այդ գյուղում
կոռպերատիվ եր բացվել: Գյուղացիները կա-
մաց կամաց սովորում եյին կոռպերատիվից առե-
տուր անելուն: Շատերը նրա ճամբեն չդիտե-
յին: Զանունց քիքիրն ել առաջին անգամը ներս
մտավ:

—Բդոյի մուշտարին հետ տվինք, տղերք,
— հրհուացին կոմյերիտականներն իրար դիպշե-
լով:

Ճամբի դլսին Բդոյի ցածրիկ խանութն եր
պալպել:

Բդոն ձեռքը դրել եր չամչի տոպրակի
վրա ու յերեսը թթու խմորի պես պծպծացրել:
«Թու, թարս որ ե», — մտմտում եր նա:

— Բարի հաջողում, Բդու ախակեր, — ներս
մտավ Պողոսը՝ շուխի փեշը հետ գցելով:

Բդոն գլուխը բարձրացրեց ու տեղ տվեց:
Մի քանի բոպե անց՝ Պողոսը ձեռքի, վոտի շար-
ժումներով բան եր պատմում Բդոյին. նա ել
լսում եր՝ հունքերը խաղացնում:

Ներբի թաղից բարձրանում եյին մի խումբ
հարս ու աղջիկներ, Նրաց առաջնորդում եր
Նաթելը: Նրանք իրար հրում եյին, իրար ական-
ջի վսփսում. մին ել ես կամ են պատի զլխից
կանչում եյին հարս ու աղջիկների:

— Վայ, Բդոյին մի տես, աման, յերազիս
չդա, — վսփսաց Անգինն ընկերուհու ականջին:

Յերը կանանց խումբն անցնում եր Պողո-
սենց դռան առաջով, Զուլումը կանչեց:

— Ալի՛կ, Ալվան, դրուս արի, զնում ենք
ժողով:

Մինչդեռ Ալվանի հորեղբոր կին Դահրին
մատը թափանարեց, աչքերը վոլորեց:

— Դե, դե, տեղդ վեր ընկի, քեզ զնալ չկատ
Մենք եկ յեթվածների նամուսիցը չունենք: Յե-
րեսի մեռոնը վեր բերած Նաթելի հետ յեռ աղ-
ջիկ չեմ ճամբի: Հրեն հրոխալորդ գուլպան շարի:

— Ալի՛կ, — մի անգամ ել բղավեց Զուլումն
ու վազեց խմբի հետևից:

Զենն ուժով թրթռաց Ալվանի ականջինու
Ներսից լսվեց Ղահրու պատասխանը:
— Ղահրումմր...

II

Կեսոր եր:

Քիթ-քթի տված, փափսալով դալիս եյին
Պողոսն ու Բդոն:

Պողոսը բարձրահասակ, խոշոր գեւքով դյու-
ղացի յեր: Խոտի գեղերի պես հոնքերը կիտվել
եյին աչքերի վրա և թափուտի պես խիտ բե-
խերն ու միրուքը ցրիվ եյին յեկել քթի տակ:
Շալից կարած թազա չուխեն ֆոռում եր Պողո-
սի ծնկների վրա. Նա շուտ շուտ փեշը հետ եր
գցում ու ձեռքը գոտկատեղը խրում: Մեկ մտած-
մունքով խոժոռում եր հոնքերը, մեկ ել խորա-
մանկ ժպառում ու խփում եր Բդոյի թիկունքին:

Բդոն ենքան կարճ եր, վոր հազիվ եր հաս-
նում Պողոսի ուսին: Վոտներն ու ձեռքերը բա-
րակ եյին, զլուխը զգումի պես կպած եր ուսե-
րին. բայց ականջները յերկար ու շարժուն եյին
և առանձին կենդանություն եյին տալիս կլպված
յերեսին:

— ԶԵ, Բդո Ղան, շատ լավ բարեկամություն
կանենք: Ախպորս աղջկան՝ Ալվանին քեզ կտամ,
փեսա կդառնաս:

Բդոն ինքն իրեն փքվում եր և ուսերը վեր
բարձրացնելով զլխով անում: Պողոսի խոսքերի

հետ նա լպսուում եր պռոշներն ու սուտ հազում։ Խոսելով հասան Պողոսենց բակը։

Բակում արեի տակ, իրար պոչից բռնած՝ վաղվզում եյին յերեխաները։ Հենց փոք Պողոսի ստվերը տեսան, շվշացնելով շաղ յեկան։

— Հույ, յես ձեր... հլա մտիկ տուր, — բղավեց Պողոսը, — հարամ զաղեք, ձեզ դուռը չունե՞ք, վոր մեր գետինն եք պոկում։ Ե՛յ, Նաթելի ճուտ, ես շեմքերքում չերեաս։

Նաթելի տղան, փոքրիկ Ափոն խեթելով փախավ։ Իսկ Պողոսի յեղբոր տղան, վեց տարեկան Լիպիկը, փայտը ձեռքից վեր դցեց ու վազեց չարդախը։

Պողոսենք հին ու հարուստ տուն եյին։

Սեղանին սուփրա կար. պատերին խալի կարպետ եր կախած։ Մեծ փորավոր սամավարն ել պլալում եր լուսամուտի գոգում։

— Դեհ, նստի, նստի, Բգո ջան. — Պողոսը հրավիրեց Բդոյին թախտին նստելու։

Բդոյի վոտքերը գետին չհասան, կախ-կախ մնացին. ձեռքերն ել՝ պինդ կպած ծնկներին։

— Աղջի Ղահրի, մի արի տես ում եմ դունաղ բերել։ Զես ասի, ինչ ազիզ տղա յա։

Պողոսի կին Ղահրին քառասնին մոտ եր։ Ճակատը նեղ եր ու ծնոտը սուր։ Նա փեշերը բաց թողեելով՝ առաջ յեկավ ու բռնեց Բդոյի ձեռքը։

— Մեր դոնապը ազիզ չի լինի, — ավելացրեց
Դահրին կեղծափոք ժպիով:

Եղ ժամանակ Ալվանը չարդախում լվացք
Եր անում, ենքան տիսուր եր, վոր դանակ խփե-
յին արյուն չեր կաթիլ:

«Հորեղբոր ուժուղն ել կարվի, շան պես են
պահում», — մտածում եր նա, հոնքերը կիտած:

Ալվանը տասնհինգ տարեկան եր. սիրուն
յերեսով, բարակ մեջքով. քայլում եր լորի պես.
թեթև, թեթև: Հազի հասարակ շորը հասնում եր
մինչև կրունկները: Վոտքերին բրդե գուլպաներ
ելին ու սրածայր չուստեր: Նա սիրում եր վաղ-
վկեր, խաղալ բայց անից դուրս զալու փորձ
աներ թե չե՝ Դահրին չանչ եր անում ու վոտը
շեմքում պահում: Հորեղբայրը քույր ու յեղ-
բոր զրկել եր հողից, վոչխարից ու քիթ մուն-
նաթով եր պահում, դեռ ամենքի մոտ ել պար-
ծենում»

— Ես թափուր տարին յերկու փորբ եմ
պահում, հեշտ ա...»

— Լիպիկը փայտը ձեռքին պտտվում եր քրոջ
շուրջը:

— Լիպո ջան, կրակի տակը փչես, — ամեն
անգամ Ալվանն ողնության եր կանչում յեղ-
բորը...

Ներսում խոսակցությունը թեժացել եր:

— Մեկ ել, Բդո ջան, գիտես, — մատը վեր
բարձրացնելով շարունակեց Պողոսը, — ասում եմ

մի քիչ դես-դեն ընկնենք, իսկը թափս ա, մի լով դուքան բաց անենք՝ հենց գեղի մեյզանումը։ Դե քու դուքանի տեղն ենքան ել աշխել չի. իմ ասածը՝ Մարկոսենց Յենոքի դուքանատեղն ա. լով առևտուր կլինի, ժողովուրդն իրան հավաքել ա, փող մող ա ժաժ ընկել. տղամարդություն ա՝ թե մարդ իրան դրստի։

Պողոսը միբուքը շփեց, շեշտակի նայելով
Բդոյին։

— Լավ միտք ա,—հաստատեց Դահրին, —
հալալ ախպոր պես իրար քոմակ կանգնեք՝ գործը
զլուխ կզաւ Եստեղի կոպերատն ել մթամ բա-
ներ ա պահում։ Են որը ձալոյի հարսն ասում
եր՝ չխտի. կոպի չունեմ. ձալոն ել թե՝ ես
անտեր զեզումը բռնութի չի ճարվում։ Այ եղ
թափուր բաներ պահեք։

Թեպետ Բդոն տարիքով պակաս չեր Դահ-
րիից, բայց մայրիկ եր ասում։

— Մայրիկ ջան, —զկրտաց նա, աչքերը
պշտպշտացնելով. —մենք «սամի լուչշի», ասել
ուսող, չեշուդ կպահենք, վոր կոռպերատիվի
աչքը դուրս գա. Ահ, կուկլո, կուկլա դուքան, —
բացականչեց Բդոն վոտները շարժելով։

— Հը, վոր ասում եմ մեր Բդոն ազիզ
տղայա, ամեն բանի խելքակտուր. եսքան տա-
րի վոր առևտուր ա արել՝ բա դուքանի չեշուդ
սազացնելն ել չխմանամ։ Ողորմի բեզ, լույս դառ-

նաս Տեփան, վոր ես տեսակ զավակ յեղ գցեցիր,—ասում եր Պողոսը, բեխերը վոլորում ու ինքնազոհ ժպտում, կասես, աշխարհի դուքաններն իրեն եյին տվել:

Իսկ Բդոն խորամանկ ու մանր աչքերը կեղծ համեստությամբ հառել եր գետնին:

— Դահի՛ր, դե արաղ բեր Բդոյիս հետ չըրխսկացնենք:

Դահրին շորորալով վեր կացավ. Բդոն՝ թուքը կուլ տվեց...

Պողոսը, բաժակը ձեռքին, փափախը հետ ստարավ ճակատից.—Ես մեր աջողության ու ախալերության կենացը... Ալվանին տալիս եմ քեզ...

Ալվանը չարդախում լսեց: Նրա յերեսը պատի ծեփ դարձավ: Նա թույլ, թույլ հենվեց տաշտի կողին: Սապոնի փրփուրը պճալճաց անույժ բազուկների վրա:

Նա անասելի տխրությամբ թարթեց աչքերը:

Փոքրիկ Լիպոն վախեցած թոչունի պես փաթաթվեց քրոջ փեշերով:

— Սուս, Լիպո, կաց,—հրեց յեղբորն ու իրեն զսպած վոտների ծայրերի վրա մոտեցավ դռանը:

— Վույ, վույ ոձն ել չի թրիլ յերեսին,— շշնջաց ու պինդ գրկեց յեղբորը:

լիպոն, շվարած, աչքերը հառել եր քըռջ
յերեսին ու շրթունքները տմբտմբացնում եր.

— Զեմ, յես ել կգամ քեզ հետ:

— Ի՞նչ, կաց. ինչ ես ասում,—Ալվանն ա-
կանջը դեմ արավ դոանը:

Ներսից լսվում եր Ղահրիի ուրախ ձայնը՝

— Ե՛, փեսա ջան, մեր Ալվանն ել հո գի-
տես, սաղ գեղում մի հատ ա: Անող, դնող,
ինքն ել կոկոմի պես. տար քու արևի ձենն ածաւ:

Ալվանը մեջքի վրա հետ-հետ քաշվեց ու
քիչ եր մնում թրմփա ոջախի վրա:

Լիպոյի աչքերը ջրակալեցին:

Ալվանը հետմ եր:

— Քեզ մատաղ Լիպո, ի՞նչ անենք...

Առաջին անգամ Ալվանն իրեն այդպես մե-
նակ ու դժվար տեղում զգաց: Մի առանձին
կարուտով հիշեց Թեվանին,—են տղին, վոր ա-
սում եր «կտանեմ մեր տուն». Նրա հետ կպնամ,
վոր հիմի ել կանչի:

— Փեսա Բդո, ենա քունն ա, չմտածես
հազրվի: Են գործն ել չմոռանաս:

Հարհաններից մի քանիսը նկատեցին նրանց
ու իրար մեջ փսփսացին.—Ես Բդոն ու Պողոսն
ի՞նչ են կտուց-կտցի դրել, սրանցում մի բան կա:

Բդոն տնկտնկալով գնաց, իսկի շուրջն ել
չնայելով: Կչկչալով հավերը վախչում եյին նրա
առաջից:

«Պողոսն ել հենց խմանա, իրա ասածները
հալած յուղի տեղ եմ դնում։ Ինձ Բդու կասեն,
տասը կշափեմ, մեկ կկտրեմ։ — Նա ճակատը կըն-
ճռոտում եր ու մտքի գժար տեղը վոտքերն
իրար քսում։ — Դեռ աղջիկը կտանեմ, եղ նազդի
ապրանք ա, համ սիրուն ա, համ ջահել Շնկե-
րությունն ել Բդոյի աստվածը զիտի... թող Պողոսի-
փողերը մի ձեռքս զանց»։

Պողոսն ել յեկավ տուն ու կնկա ականջին
փսփսաց։

— Այ կնիկ, գործներս աջ ա դնում։ Համ
եղ աղջիկն ենք ուաղ անում, համ ել փող-մող
ունի՝ դուքան ենք դնում։ Փառք աստծու, հի-
մի վոր ել կոճիս ալչու կկանգնի։ Մեկ-մեկ դու
ել դուքան կգաս, սիրադ կբացվի»։

III

Կիրակի յեր։

Մի խումբ հարս ու աղջիկներ հավաքվել
եյին իրար զլխի, Զուլումենց խոտի զեղի տակ
ու թեժ-թեժ վիճում եյին։

Վորը յերեխան գրկում, վորն ել յերեխից
ձեռքից բոնած՝ տեղավորվել եյին խմբում։

— Եղ Պողոսն ել մարդ ա, վոր Ալվանի
նման աղջկանը չարչի Բդոյին տվեց, — խոսում
եր Զուլումը՝ յերեխը կբակ կտրած։ Նա հասա-
կակից եր Ալվանին ու ամենից շատ եր սիրով
վառվում։

— Այ, — աեղից կանգնեց, — իս ախողերը վոր
եղ տեսակ ինձ հետ վարվի, սադ տունը կրակ
կտամ ու Բդո չե, Բդոյի պապիցն ել չեմ վա-
խենա:

Բոլորը ծիծաղեցին համարձակ Զուլումի
խոսքերի վրա:

— Կոմսոմոլը սրա բերանն ի՞նչ թափուր
լեզու դրեց, — Փափսացին հարսներու:

— Աղջի, աղջի ջոն, մեզ ել սրա տուր, —
մեջ մտավ Զաքարենց Անդինը, վոր մի տարվա
հարս եր: Նա սկ աշք ու հունքեր ուներ, հա-
զինն ել ծաղկավոր շոր եր:

— Ասում են Ալվանը...

Բոլորը մոտեցան նրան, հետաքրքրությու-
նից անհանգստանուլով: Անդինը բերանը սրբելով
շարունակեց: — Մի շաբաթ Բդոյի հետ քնելիս չի
յեղել: լաց, ծիծաղ, վոր ինքը չի ուզում նրան,
համա են դունչը սուր Դահրին, — նա չանչ արեց
դեպի նրանց կողմը, — ջաղու իրիցկնկա հետ դեղ
են արել ու խմացըել, աղջիկն ուշքը կորցըել ա:

— Վույ, — հարսները յերեսները պոկեցին
ու ձեռքերը սեղմեցին պոռւսկների վրա:

— Վանց թե...

— Աղջի, վոր եղբան ցավում եք, զնացեք
կին բաժնին ասացեք ելի, — խոսեց մտածկոտ
Սուսանը:

— Ո՞վ եր իմացել, Դահրիենց տանից բան

ա զուքս դալի՞ս: Մենակ են տեսա, վոր Լիոլոն
խեղճ-խեղճ կուչ եր յեկել պատի տակ,—պա-
տասխանեց Նարգիզը՝ նիհար նիհար մի հարս—
Հրեն Նաթել քույրիկին կասեյինը, մի ճար
կաներ,—շարունակեց նա:

— Սուսանն իւ հեշտ հեշտ խոսում ա. են
որը ապին քիթ ու պոռագս ջարգեց, թե զու-
խի՞ յես Նաթելի հետ խոսում,—խոսեց Սոնան՝
տանջված ու գունատ դեմքով մի ուրիշ հարս:

— Դու ամենից ազատ ես ու համարձակ,
թող զու ասեյիր,—վրա բերին մի քանիսը միա-
սին:

— Հրես, թող Զուլումն ասեր, վոր կոմ-
սումուլ ա:

— Դուք ձեր բանին կացեք, նորից մեջ
մտավ Զուլումը,—յես ու Սուսանը Նաթելին
ասեցինք, բայց ուշ եր: Բոլոն, են գրողի եկածը՝
Ալվանին տարել եր: Յերեկ ել մեր Սաքոյի հետ
եյի խոսում, ասում եր դուք կանայք եք, իրար
պաշտպանեցեք, Ալվանին ձեր կողմը բաշեք, դնա-
ցեք գանգատիւցեք:

— Վայ, վարտեղ,—հարսներն իրար սեղմ-
վեցին:

— Բա՛, տեսնում եք, վանց եք վախենում,
աժաշում:

— Սուդի դուռը... վի՛...

— Մարկոսը կապանի...

Հարսներն անվատահությամբ իրար յերես նայեցին:

— Ի՞ն, վախկոտաներ, յես Ալվանին մենակ չեմ թողնի, — հայտարարեց Զուլումը:

— Եղ, եղ դժոխքի սատանա Բղոն յերկու կնիկ ձեռելով դուրս գցեց. ինքն ել պապիս թայն ա, — վոխը սրառում նորից բացականչեց Անդինը:

— Չե, Ալվանը խեղճ եր, թող փախչեր... Յես վոր լինեմ, Բղոյին կիսեղեմ, — պորթկաց Զուլումը, ձեռքերն իրար սեղմելով:

— Աղջի կամաց, ապին անցնում ե, — կուչ յեկավ Սոնան.

Մինչ այդ չեր խոսել կարձիկ Ալուֆը. այդպես եյին կանչում Բաղրամի հարսին: Նա, իրեն-իրեն նեղացած՝ ընդհատեց խոսողներին:

— Հա, փախչեր, հս կապը կտրած չեր. բա իրա մեծին չպիտի լսե՞ր: Գուք ել թագա բաներ եր սովորել, մեծ-մեծ խոսում եք. Հրոխապերը հաց ա տվել, պահել՝ մարդի ել կտա, ձեր ինչ գործն ա:

— Այ, հոգեմ քու գլուխը շաշուփենջ Ալուփի, — մի քանի կողմից բամփեցին զլիսին:

— Տեսեք թե ում ա պաշտպանում. դե լավ ա, քու մարդն ել Բղոյից պակասը չի:

Հրեցին Ալուփին ու մեջտեղից դուրս դցեցին:

Սուլուփը փնթփնթալով հեռացավ:

— Վայ ձեր անզգամ զիսին. եղ Նաթեն
ու Զուլումը ձեզ մարդից ել կհանեն...

— Դու քու մարդի փեշը լավ պահի աղջի՛, —
բղավեցին նրա հետեից,
եղակես իրար հերթ չեցին տալիս խոսելու,
յերբ Անզինը նկատեց Նաթելին ու ձեռքով
արեց:

Նաթելը՝ յերեսուն անց կին եր. բարձրա-
հասակ կազմվածքով: Դեմքը տանջված եր, զի-
մազծերը խոշոր: Քայլում եր արագ-արագ: Գըլ-
խին կանաչ շալ ել զցել: Հարս ու աղջիկ ճա-
նաչում եյին նրան, ամենքի դարդը նա զիտեր:

Յերբ Նաթելը մոռեցավ, մի քանի հարսներ
տեղից վեր կացան:

Նա՝ շալը հետ զցելով, բիրանը բացեց.

— Զե, Նաթել քույրիկ, բանն իմացիր հե-
տո, — պատասխանեց վիրավորված Անզինը:
— Լավ, լավ, հանաք եմ անում, դե ասեք
տիսնեմ:

— Են վոր քեզ տաեցինք, Ալվանին մարդի
յեն տվել, զուսվ, լացով, դեղով... — մեջ մտավ
անհամբեր Զուլումը:

Մյուս հարսներն ել անհանգիստ շարժվում
եյին տեղերում, վոր մի պակաս բան ել իրենք
տաելին:

— Սպասեք, — լոեցրեց Նաթելը:

— Եղ պատմությունն իմացա, դիտեմ թե
վոնց ա յեղել, վաշխառու Պողոսի սարքածն առ
Նաթելն ինչ աներ, հո թուր չունեմ, վոր Պո-
ղոսի կամ Բգոյի զլուխը կարեմ, Պիտի Սոլորս
կանգնեյինք, Ալվանն ել առաջ գար, չթպնեյինք
Բգոն զոռով տաները Դուք հիմի վոր եղպես
բլրլում եք, տեղն յեկած ժամանակ իրար փեշի
տակ եք մանում ու պապանձվում...

H 8094
— Դուզ ա տառմ Նաթել քույրիկը հաս-
տատեց Զուլումը:

Նաթելի սուր նկատողության համար մի
քանի հարսներ իրենց մեղավոր զգացին ու
զլուխները կախեցին:

Նաթելը զայրույթով շեշտեց.

— Բգոն: Բգոն չի ուտի. Ալվանը նրան
հարսնություն չի անի. զոռով տարածը զոռով
կփախչի:

— Զան Նաթել քույրիկ, քուրերնին զուր-
բան, եղպես ասա, սիրտս հովանա, — վոգեորգեց
Անգինը՝ ձեռքը սրտին քսելով:

— Դե, յես դնում եմ, զործ ունեմ, —
շտապեց Նաթելն ու շալի տուտերը հավաքեց:
— Զմոռանաք, եղուց կհավաքվեք Նիշու-
նենց ողեն, ժողով կա:

— Բա վոր մեր Մարկոսը չթողնի, — դժգո-
հելով հայտնեց Սոնան:

— Աղջի, մի քիչ ել ուրեք ժամարձակ յե-

զեք. խոտակերի պես բերաններդ միք փակի ու կանգնի: Ես Մարկոսը գլխիդ տա, ես ապին վոտի տակը զցի—դուք ձեր իրավունքները պաշտպանեցեք ելի...

— Ուխայ, լավ ասիր քույրիկ, — նկատեց տեղից Զուլումը:

Մյուս հարսներն ել իրար յերեսի նայեցին ու Նաթելի գնալուց հետո ցրվեցին:

Վորի յերեխան եր ձչում, մայրը նրանով եր յեղել, վորն ել մտքում կրկնում եր. «Ալվանը Բղոյին հարսնություն չի տնի»:

IV

Գյուղից հեռու, բվի պես մենակ թառել եր Բղոյի տունը:

Տան չորս կողմը պատած եր. Բղոն եր իր ձեռքով քարերը շարել:

Բղոյի հայրը՝ շթավաճառ Տեփանը, դեռ իր կենդանության ժամանակ ասում եր. «տունդ, դուռդ պատի, քու սահմանները դու լավ պահի: Անվախտ ու վախտին հարեանները դուռդ կդան՝ լավ չի: Դրանցից քեզ շառ կզա. պարանք կունենաս աչքերովը կնկնի ու... չի ասվիլ»:

Բղոն հոր մահից հետո, պատվերը կատարեց:

Նրա տունը հարեաններ չեյին գնում, նրա դռանն ուրիշի հավերը քուջուջ չեյին անում: Վայ են աղքատին, վոր Բղոյի բակը մտներ.

Բդոն շամել քսքս եր տալի, շղթան արձակուժ.
ել աղքատ կկանգներ, ել շնորհ կմնար:

Հորեւանները պատմում եյին, վոր տանչորս
թիվի կոփիվներին Բդոն դնացել եր ֆրոնտ ու շատ
թալաններ բերել:

— Եղ դոքանն ուրիշների արյուն քրտին-
քով ե Բդոն զրել, —ասում եյին զյուղացիք:

Կիրակի որերը նա փակփում եր տանն ու
հաշիվների մեջ խճճվում: Հորից մնացած մեծ
ու կեղտոտ հաշվեհամրիչը դցում եր, նա զցում.
Նաղդ ու նիսյան իրարից բաժանում: Ապա՝ վեր-
ջացնելոց հետո, մի ողի յեր կոնծում ու հի-
շում եր հորը:

— Ասել հերս թե՛ առևտուրը դովբան ա,
մին կդա, մին կերթա:

Ալվանը աչքը բացեց ու իրեն տեսավ չար-
չի Բդոյի տանը:

Ենքան լաց յեղավ, ուզում եր փախչել:
Դահրին նրան չարդախի սյունից կապեց ու Պո-
ղոսն իր խոսքից հետ չկանգնեց:

Հարևանուհիները պատերի տակ փափոյով
խոսում եյին Ալվանի տանջանքների մասին:

— Բդոն սոված ե թողնում:

— Բդոն դուռը վրան փակում ե, —և այս-
պես շատ բաներ:

Անցել եր յոթ ամիս:

Նա մենակ հաշվում եր տիսուր որերը:

Բդոյի պատվերով, մեկ-մեկ կուզիկ իրից-կինն եր այցելում Ալվանին, նատում եր՝ ծանրութակ խրատներ տալիս:

Ալվանն ատում եր նրան. գործով եր լինում, վոր շուտ գնա:

Պատի դիխից մեկ-մեկ ել Զուլումն եր կանչում Ալվանին ու Բդոյից թագուն գնում եյին նրանց տուն: Ալվանն ենտեղ սիրտը բացում եր:

Բդոյի տանը փակովի սնդուկներ կային, վորոնց մոտով Ալվանը սարսափով եր անցնում: Նրանց մեջ եյին պահված Բդոյի ասլրանքները:

Ամեն անգամ, յերբ Բդոն բացում եր ողնդուկը, Ալվանի վրա ցավ եր գցում:

— Մի քիչ հեռու կանգնի, գնա գործիդեստեղ կնիկարժատի գործ չկա:

Որը մեկ եր, Ալվանի տանջանքը հազար:

Բդոն մերու սոված գայլի պես, Ալվանի միսն եր ուտում:

— Ես հացն ա տանից պակսել, ես ձուն տեղը չի, ես կերակուրն ա աղի ու մի պատճառ գտնելով ծեծում եր:

Ալվանը վեց ամսվա հղի յեր: Ենթան եր գունատվել, վոր չեր կարելի ճանաչել. նա որորի վրա մոմի պես հալվում եր: Բահ չեր ուտում, սիրտը թափում եր ու դիռ եղ քիչ եր՝ ամեն անգամ զզվանքով եր պառկում Բդոյի կողքին:

Փոքրիկ Լիպոն եր, վոր չեր մոռանում իբ
սիրելի Ալիկին։ Բգձյից թագուն, դալիս եր քրոջ
մոտ, լաց եր լինում ու դանգատվում Դահրիից։

Ալվանի սիրտը կտրտվում եր, զրկում եր
Լիպոլին ու հեկեկում։

Այս Լիպո, իմ աչքերը քոռանան, քիչ
ել համբերի։

Ի՞նչ անեմ, թե ես հալին չլինեյի, ես-
տեղ յեսիր չեյի մնա .. Մտածում եր նա ու
քաշվում եր մի անկյուն։

Բա վոր ասեն մարդաթող...

Մեկ ել պարզվում եր գեմքը.

Հրեն Զուլում ու Նաթել քույրիկը ինձ
կպաշտպանեն։

Եղ մաքերին հաջորդում եյին ուրիշ մաքեր։

Տերտերակինն ասում եր՝ չարքեր են բուն
դրել կանանց մեջ։ Որինակ եր բերում Զա-
րիկին, «վոր չար սատանի հրամանով մարդա-
թող յեղավ»։

Ալվանը չել հավատում, բայց տան մութ
անկյունները սարսափ եյին ներշնչում. սիրտը
դողում եր։ Յերեխան շարժվում եր նրա կրծքի
տակ. վոտքերը թուլանում եյին. ըկնում եր ան-
կողնու վրա։

Ճրագի լույսի տա՛լ Ալվանը կարում եր։
Գլխին գցել եր մորից հիշատակ մնացած բոր-
դոյի բաղդադին, տուտերը խնամքով կապել եր

ըկի տակ: Աչքերը տխրությամբ լի՛ հետևուժ
եյին ասեղի ծայրին:

Նա հիշեց մորը՝ սիրուն Սուսամբարին, վոր
իր Ալիկին քաղցր, քաղցր համբուրում եր.

— Այս, ժայրիկ, քու հոան ե դալիս սրա-
նից, — բաղդագու ծայրը պինոդ համբուրելով քաց
ջրակալած աչքերին:

Հայրը, վոր հազիկ եր հաց հասցնում իր
յերեխաներին, ելի ամեն զատկին իր Ալիկի հա-
մար կարմիր չթից շոր եր առնում:

Ալվանի հիշողությունները դեռ պայծառ
եյին. նա ժպտում եր:

Հիմի ե՞ Նաթեն ու Զուլումը կանչում են
ժողովի, Թղում եր թե դուրս ե դալիս արևի
տակ, հենց զնում եր Նաթելի կողքով...

Նա հետաց, կուրծքը բարձրացավ: Կարը ծընկ-
ների վրա՝ վոտքն առաջ դցեց, ուզում եր
կանգնել...

Մեծ սնդուկը չըխկաց նրա վոտքի դեմ:

Ալվանի սիրտը մթնեց: Բղոյի պատկերը
չանգի պես բռնեց աչքերի առաջը:

— Զե, ես Բղոյի տունն ե, ես Բղոյի փա-
կերն են:

Ու հենց այդ բողեյին լսվեց Բղոյի վոտնա-
ձայնը.

— Ել ի՞նչ ես դունչդ անկել, աշխարհի
խարջը քեզանից են ուզում, թե ի՞նձանից, իմ
ես ջանիցը, — ձեռքը խփեց կրծքին Բղոն, — դուքս

եմ գնում, ենտեղ են ինձ վառում, տուն եմ
գալիս՝ սայ յե քթով ունդունում,—ասաց ու
մնդուկի կողպեքը շոշափեց:

— Ի՞նչ ես ուզում, բանի խոսես, ամեն
տուն մտնելով հենց բղավում ես,—պատասխա-
նեց Ալվանը:

— Շատ մի խոսիւ, յեթիմ շուն, դոներն
եյիր միացել—հրսխպերդ չեր պահում. արի
ձեռքս պաշի... Վեր կաց հաց բեր ուտեմ, առ
բալանիքը:

Բդոն հացի բանալին իր գրպանումն եր ոլ ա-
հում:

— Քիչ համբերիր, հո քո յեսիրը չեմ,—դո-
ղացին Ալվանի շուրթերը:

— Յեսիր չես, բա ի՞նչ ցավ ես, հրես կը-
հասցնեմ: Ի՞նչ ա, հեղափոխվել ես, թագա աշ-
խարհ ա, հիմի մենք ենք ձեր կնիկը՝, առ
հա՛,—հրհուաց Բդոն թունավոր շեշտով, ապա
զլուխը կախ՝ նստեց մնդուկի վրա:

— Դուզ ա, վոր կանանց սիրաը շարքեր
են մտել: Հըմ, շարքից-շարքը յես եմ, հո գի-
տես,—սպառնաց նա վոտքը մնդուկին խիելով:
— Ի՞նչ դու յեկար, անաջօղությունն ինձ պա-
տեց, մուշտարիքս փախչում են որպա եղ կո-
պերատ զահրումարը: Կոնց վոր սուրուն կոր-
ցրած չոքան՝ հնենց ա մեջքս կոտրել:

Խոսելու ժամանակ Բդոյի լեզուն բռնվում

եր ատամների մեջ, զոռ եր տալիս կոկորդին ու
բղբղում:

Ալվանը խեթեց ու վեր կացավ:

Քու հլա կարում ես Բղոյի առաջ լեզու
հանել համ, այ, համեցեք, զգակս դիր, — նա
տեղից կանգնեց կարճ բազուկը դողացնելով:

Ալվանը հազիվ փախով, կարը փոթաթվեց
նրա վոտքերին:

V

Իրիկնանում եր:

Բդոն՝ բութ մատներն իրար բոելով՝ աչքերը
միսել եր խանութի շեմքի պայտին:

Պողոսն այնպես եր շտապել, վոր ճակատից
քրտինքը ծորալով ներս մտավ.

— ՀԵՅ, հԵՅ, Բդոն, առ քեզ փողերը՝ տաս
թուման, քոան թուման, յերեսուն թուման...

Չուխի փեշը դռան դեմ պահած՝ Պողոսը
հաշվեց փողերը: Բդոն տեղից կանգնել եր ու
աչքերն ագահությամբ փայլում եյին:

— ԱՇ, քեզ ասում եմ, Բդոն մեր ախաղերու-
թյան մեջ հալալություն լինի:

Մին ել՝ թափով ներս ընկալ տեր կարա-
պետը. նրա վոտքն առավ շեմքի պատին ու րիչ
եր մնում փափի:

— ԱՇ, անիծվին դրանք, մարդի դադար չեն
տալիս, հարամի ճուտերի պես լուս աշխարհ են
ընկել, հոտիս մեջ անունս զցում են...

Մինչ Պողոսն ուշադրությունը դարձրեց տերտերի կողմը՝ Բգոն լքվալով փողերը պարտակեց դադանի դրաններում։

— Ի՞մ, ըստ... փողերը, — մի փոքր շփոթվեց Պողոսը։

— Փողերը մոտս ա, վերցրի—լավ չի աչքի առաջ թափած, — պատասխանեց Բգոն՝ քմծիծաղ տալով։

— Տերտեր, այ, յես իմ բաժին փողը տվի. յես ու Բգոն եսորվանից հալալ հացի տեր ենք, ընկերանում ենք, — խոսեց Պողոսը։

— Վորդի, դուք եք մնացել հալալ ու հավատով, ձեր դործն ել աջող կզնա։

Տեր Կարապետը մի հատ չիր զցեց բերանն ու շարունակեց։

— Միրուքավորներիս բանն ա դժվար, մեռելահաց չեն տալիս, կնունք չեն անում..., տաստված ձեր գործը վաստակով լինի, ձեր տերտերին մեջներդ պահեք... — Եհ. Եհ. Եհ, — հառաչեց նա, — առաջ, վոր պատարագ եյլ անում, ձենս զիլ եր, համնում եր մինչև աստծու ականջը, հիմի դողդողում ա, Պողոս, դողդողում։

Բգոն հազիվ եր զսպում զայրութը, յերբ շուտ-շուտ տեր Կարապետը չիր կոմ չամիչ եր զցում բերանը։

Ներս մտավ զյուղացի Աթոն։

Թևանն ու Սաքոն, յերկու կոմյերիտա-
կաններ աչքերը պլշացնելով անցան Բգոյի խա-
նութիւ առաջով։

— Ոհո, տերտերը, ե՞ն ել Պողոսը, թիո,
դարան մտնենք։

— Մեղա, մեղա, ականջ արեք, — ակսեց
պատմել տերտերը, ֆարաջի թեր զցելով։

Պողոսն ու գյուղացին վլուխները մոտեցրել
եյին տերտերի միլութին։

— Յերեկ գիշեր, գեռ արլորը չեր կանչեց
իրիցկինը կողքիս բգեց. «Վեր կաց, վեր կաց,
յերազ տեսա»։

Տեր կարապետը նայեց չորս կողմն ու
ավելի ցածր շարունակեց՝ յերեսը խաչակնքե-
լով։ — Ասում ե՛ Հիսուս Քրիստոսն ինքը կանգնել
եր ձեռքը բարձրացրած, իսկ անաստվածները
դժողբումը վառվուժ եյին։

Բժ, — բացականչեց Պողոսը, — լավ լոիր
Աթո։

Աթոն սարսափով յերեսը խաչակնքուժ եր։
Իսկ Բգոն ձեռքը գրպանում, փողերն եր
շոշափում, տերտերի վոչ մի խոսքը չլսելով։

— Հետո, տեր հայր։

— Հետո հրեշտակները բոնոտուժ եյին ես
փուչ կոմսոմոլներին ու զցում կրակի մեջ։
Վորդի, սրանց զլիսին չարն ա ոլտավուժ, սը-
րանց վրա կոիվ կա։ Աստված սուր ու կրակ ա

դրկելու, աղոթեցեք, — մատը վերև բարձրացրեց, — բա զիտե՞ք զյուղխորհրդի նախագանձիվանդա, ան տեսակ ցավ ա, վոր ել չի տպառվիլ. անհավատությունից ա, թող իմանաւ — զատկին տունը դնացի, շեմքիցը հետ դարձրեց:

Ներս մտավ մի պառավ գեղջկուհի.

— Զամիչ չունե՞ս: Նա յերբ տեսավ տերեսին, զլուխը խոնարհեց ու մոտեցավ աջը բռնեց:

Բդոն ուշքի յեկավ.

— Ազի, քանի՞ գրվանեքա:

Պառավը լսեց տերտերի ասածներն ու սարսափանար բղավեց.

— Սուրբն ինքն ե ասում, գնամ մոմ առնեմ վառեմ, գնամ աղոթեմ...

Տեր կարապեան ու Պողոսը յերբ դուրս յեկան, արդեն մութն եր:

Սաքոն ու Թեանը հույս տվին:

— Տեր կարապեան սուտ ասա՞ն, ժողովրդին խառնակող, — շվացնում եյին.

— Հույս, հույս...

Տեր կարապեան ու Պողոսը մութ պատերի տակով դնացին:

— Աստված չարը խափանի... Պողոս, հոչե՞ն հասնում, դրանք իմ տունը կրակ կտան, իրիցինկա աչքը խաղում եր:

Փողոցում աղմաւկ եր. կոմյերիտու կաննքն
ու գյուղացիները խառնվել ելին իրար:

Աթոն շիփ շիփար, վիզը ծուռ կանգնել եր:

— Վո՞նց թե...

— Ի՞նչ եր ասում:

— Ո՞վ.

— Ո՞ւմ:

— Բդոյի գուքանում...

Խլացնում ելին իրար:

—Տեր կարապետը սուտ սուտ յերազներ եր
պատմում, — զոռում եր Սաքոն:

— Վայ անհոգին:

— Մենք զիտում ենք, չենք հավատում, —
բղավեցին մի քանի գյուղացին:

Աթոն վախվիսելով պատմեց ասում եր
աղոթեցե՞ր, ասում էր կրակ ե գալիս, սուբ
կռիվ. հրեն գյուղաբնակի նախազան մեռ
նում ա ...

— Տո հասեք բռնեք, վո՞նց թե միոնում ա ...

— Չենք աղոթում ...

— Միտմիտ Աթո, գլխին խփեց մի հոկա
գյուղացի:

Աթոյի գերը ծանը եր. ամեն կողմից քաշ-
քշում ելին ու զանազան հարցեր առիլիս:

Եղ ժամանակ Զուլումն ու Ալվանն արագ-
արագ անցնում ելին:

Գյուղի ճրագները նոր եյին վառվել:

Աշնան բարակ անձրև եր կաթեթում:

Ալվանը շալը զցած՝ դուրս յեկավ տանից:
Նա այնքան եր լաց յեղել վոր աչքերը կոկո-
նել եյին. շուտ-շուտ հետ եր նայում ու քայ-
լերն արագացնում: Նա Նաթելի դուռը ծեծեց:
Տանը մենակ փոքրիկ Ափոն եր:

Ալվանն անհամարձակ դուռը բացեց.

— Ափոն ջան, Նաթել քույրիկ տանը չի:

— Ես ա կգա, գնացել ա ժողով, — պա-
տասխանեց Ափոն իր խաղը շարունակելով:

Ալվանը նստեց թաղթի ծայրին. շալը դր-
էից չհանեց:

Այրի Նաթելի անակը շատ աղքատիկ եր,
բայց մաքուր եր ու կարգին: Պատերին կպցրած
եյին կին հեղափոխականների մի քանի նկար-
ներ:

Ալվանը նայում եր նկարներին ու շունչը
պահած սպասում:

Նաթելն անձրիխ փախած՝ ներս մտավ:
Թրջված շալը դլիսից հանեց, թաց վոտները
թփթփացրեց շեմքում:

— Ալվան ջան, բա՛րովի:

Ալվանը տեղից կանգնեց ու հարգանքով
բռնեց Նոթելի ձեռքը:

— Դեհ ասա տեսնեմ, եղ ինչու յես եղ-
քան տխուր, յերեսիդ դույնն ել թռել ա:

Ամաչելուց Ալվանը գլուխը կախեց.

— Նաթել բույրիկ, Նաթել բույրիկ — շըրթունքները կրծում եր նա ու չղիտեր ինչպես սկսի: Վերջապես դողացող ձայնով շարունակեց.

— Մի սրտացավ ժարդ չունեմ... Մի խելք խրատ տուր, ի՞նչ անեմ, ուր փախչեմ... Նրա աչքերը լցվեցին:

* Նաթելը գլուխը ծանր շարժեց:

— Դժվար տեղ ա մինել, վոր եղ վիճակին չմինեյիր՝ մի գործ կանեյիր, կապըեյիր...

— Եսքան ժամանակ ել վոր համբերել եմ, եղ ա բկիս չոքել, — Ալվանը հեկեկաց:

— Ալվան, ի՞նչ ես անում, յերեխիդ ա վեաս:

— Նաթել բույրիկ, ախը բուկս խեղդվում ա, իմ հասակի աղջիկները հրեն կոճի յեն խողում... Ուր ա թե փորումս սատկի. իհ*. ամեն անգամ դանակ ա վրա բերում. են որն ել լիպիկին տանից դուրս դցեց — բա ել վոնց համբերեմ:

Նաթելը հանգստացնում եր Ալվանին:

— Վոր չես սիրում, վոր եղպես ա վարդում, մի ճամբա պիտի գանենք...

— Միս ու փետ ա անում, զոռով ծոցին քնացնում, — Ալվանն ավելի բարձր հեկեկաց, — են կուզիկ իրիցկինն ել մի կողմից, դիսիս դեղ ու դիր ա անում, վայ թե յես շաշանամ...

— Ալվան ջան, արի մենք դրանց դատի տանք. Բդոյին, Պողոսին, վոր ըեղ զոռով քառասուն տարեկանի տվին:

— Եսքան աշխարհը լուսավորվեց, եղ մոթալ փափախավորները խելքի չեկան, վոր չի կարելի կնոջ հետ եղակես վարվել. Եղ տեսակ մարդի գնալը կտրվի:

Նաթելը տիսուր շեշտով հիշեց իր անցյալը: — Ի՞ն, իմ ջանելությունն ել մի լավ չանցավ: Մարդու ենքան դադանակով ծեծել եր, գլխիս պոտոկներ եյին դուրս յեկել: — Ինքն իրեն հարցըց, — Ասա խի չեյիր թողնում են ժամանակ եսպես չեր-շատ, շատ ելինք մութ... Կարձ լուռթյունից հետո ավելացըց — երնեկ թագա ջանելանամ:

Ալվանն են ժամանակ դուրս յեկավ Նաթելի տանից, յերբ անձրել դադարել եր ու աստղերը պեծպեծում եյին յերկնքում:

— Մենք դրանց դատի տանք, — ճանապարհին հիշում եր Ալվանը Նաթելի խոսքը:

VII

— Ալվան...

Բդոյի տան պատի տակով Զուլումն արագ անցավ:

Ալվանը վեր թռավ տեղից, դուռը փակեց ու դուրս յեկավ:

— Ել չեմ վախում Զուլում ջան, ի՞նչ ու-
զում ա անի, յեսիր չեմ մնա նրան:

— Ի՞նչքան սրտոտ ես դառել Ալիկ ջան,
շատ ել լավ ես անում, վոր յես լինեմ, եղ շուն
Բդոյին կիսեղդեմ:

Նրանք չնկատեցին, ինչպես իրիցկինն ան-
ցավ՝ աչքը նրանցից չհեռացնելով:

Զուլումն ու Ալվանը մի խուլ ճամբով գը-
նացին:

Նխշունենց ողում հավաքվել եյին հարս-
ները, հանաքներ եյին գցում, ծիծաղում:

Յերբ Ալվանը ներս մտավ, զարժացած
իրար ականջի փոփոսացին:

— Ես Բդոյի ճանկից վո՞նց ա պլծել:

— Ի՞նչքան ա լդարել:

— Աղջի, յերեխով ա.

— Գլխինն ել մոր բաղդադին ա. ի՞նչ ել
սագում ա:

— Եստեղ, եստեղ արի Ալվան, — Անդինը
հրավիրեց իր կողքին նստելու:

Ողեն շատ փոքրիկ եր, բայց նխշունն այն-
պես եր դասավորել կճուճներն ու մնացած ա-
մանները, վոր նստելու բավական տեղ կար:
Գետինը մաքուր ավելած եր ու խսիր փուած:
Մի կոտրած սեղանն կսլցըել եր ոլատին ու հա-
յելին, սանրը, մի յերկու զիրք ել դըել վրան:
Լենինի նկարը սպատին յերկար կախված մնա-
լուց դեղնել եր:

Այդ ողում ապրում եյին քույր ու յեղ-
բայր՝ Նխշունն ու թեանը:

Նխշունը վատքի վրա, ընդունում եր ընկե-
րուհիներին ու տեղավորում: Նա Ալվանին ա-
ռանձին մտահոգությամբ դիմավորեց. Նրանք
իրար քաղցր ժալտացին:

♦ Ալվանը նստել եր Անդինի կողքին:

— Ասում են Բդոյին թողնում ես հա, —
հարցը Անդինը:

Ալվանը դժվարանում եր պատասխանել:

— Ասում են քեզ տերտերակինը դիր ա-
մանում:

Ալվանը կարմրատակեց. հիշեց կյանքը
Բդոյի տանը — յերեսը մռայլվեց:

Անդինի ամեն մի հարցը ծանը քարի պես
ճնշում եր Ալվանի սիրտը: Ամեն մի ուշադիր
հայացք, յերբ ընկնում եր Ալվանի վրա՝ նա
քիչ եր մնում աղաղակի.

— Յես մեղավոր չեմ, զոռով, զոռով զցե-
ցին Բդոյի կողպեքների տակ:

Նաթելը յեկտվ մի ուրիշ կնոջ հետ, վորի
թեկի տակ թղթել կային:

Հարսները շշնջալով հրեցին իրար. Ալվանն
ուշը եկավ:

Նաթելը ժողովը բացեց:

Քաղաքից յեկած կինը խոսում եր ձեռքերը
շարժելով:

Ալվանն ուշադիր լսում եր.

— Կինը կոռպերատիվում.

— Կինը խորհրդի մեջ...

Աւ այդպես խոսում եր կնոջ իրավունքների և անելիքների մասին:

Եղ մտքերն Ալվանը չեր ուզում մոռանալ:

— Այս ինչքան բան դիտի... շշնջաց Ալվանը: Թհանը մի յերկու անդամ անցավ պատուհանի տուաջով և աժեն անցնելով աչքն ընկնում եր Ալվանի վրա:

— Տեսնես սրան ի՞նչ տեսակ մարդ ունի, վոր իմ տեղը լիներ ի՞նչ կաներ... ինձ նման չեր մոլորվի...

— Ժողովից հետո Ալվանն ու Զուլումը շատապ դուրս յեկան: Մյուս հարսները շրջապատեցին կին բաժնի աշխատակցին:

Թհանը բարեկց Ալվանին ու Զուլումին: Ալվանը շրթունքը կծեց ու շշնջաց — Թհանը...

— Լավ, ի՞նչ եք եղքան վուազում, կանգնեք խոսենք, եսոր ի՞նչ եք սովորել:

Ալվանը շալը քաշեց վորի վրա. Զուլումը պատասխանեց:

— Քեզ ի՞նչ, դու քո սովորածը մեզ ասում ես:

— Պահ, պահ, Զուլում, մի քիչ ել բան սովորես, հետդ մարդ չի կարա չափվի:

Ալվանը ժպտում եր. ընկերուհու պատասխանը շատ դուր յեկավ:

— Ալվան, դու ել մարդի զնացիք՝ ծանրացար, չես ուղում խոսես:

Ալվանը յերեսը թաղցրեց Զուլումի զլիսի հետեւ: Թևանի ծունկը դիպակ Ալվանի կողքին, մի թեթև ցնցվեց:

Ալվանը հիշեց բոլորը, Թևանի հետ ունեցած հանդիպումներն աղքրի մոտ, իրենց պատի տակ. ինքն ինչպես ծիծաղում եր ու փախչում: Թևանն ասում եր. «Ալվան քեզ կտանեմ մեր տուն» ու շուտով բաժանվում ելին:

Հետո հանկարծ պատահեց, Թևանը յերկար ժամանակ չեր յերեռում, Ալվանին զոռով ամուսնացրին Բդոյի հետ:

Մի ակնթարթում այդ հիշողությունները պաշարեցին Ալվանին, նրան թվում եր, թե հենց հիմի Թեվանը կասի. «Ալվան գնանք մեր տուն»:

Թեվանը ախուր նայում եր Ալվանին. լուռ հայացքն ասում եր.—«Ալվան ամոթ չե՞ր, ինչու ամուսնացար, Ալվան, խաբեցիր»:

Ալվանն ու ընկերուհին շտապեցին:

Թեվանը սուլում եր: Ալվանը հետ հետ եր նայում ու կարմրատակում:

— Ափսոս Ալվան, իսկի չի ուղում չարչի Բդոյին: Մտածում եր Թեվանը:

Ալվանն ու Զուլումն անհայտացան:

Թեվանը մտածմունքի մեջ, գլուխը կախ:

կանգնել եր: Նա շատ եր սիրում Ալվանին. ել
ո՞ւմ կարող եր այնպես կպչել. «Վոչ վոքի սիրոս
չի կպչում, Ալվանը լավն ե»: մատը դրեց
քունքին:

Նա մի քանի շաբաթով միայն գյուղից բա-
ցակայեց, յեկավ ամեն ինչ փոխված եր; Ալ-
վանը մարդի յեր գնացել:

Դանդաղ քայլերով թեքվեց դեպի տուն:

Իրիցկինը զարբով անցավ Նխշունենց պա-
տի տակով: Նա տեսել եր Ալվանին, Զուլումին.
տեսավ ինչպես Թեքվանը բարեվեց, ինչպես Ալ-
վանը կարմրեց:

—Բդո, կնկանդ աչքով պահի, դես ու դեն
ա՝ զնում ու...—հայտնեց տերտերակինը:—
Զարք ա մտել սիրու, Բդո...

—Զարքը հնենց հանեմ, վոր սիրոն ել հե-
տը դուրս դա, —արնակալած աչքերը վոլորեց
Բդոն:

Ալվանն անհանգիստ եր: Տան մեջ դադար
չեր առնում. կասես սիրոն ուզում եր տեղից
թռչել:

Մեկ Նխշունենց տունն եր մտքում, ապա
Թեքվանի քաղցը բարեր... սիրու բարախում եր
ու յերեսը տաքանում. «Ինչու չփախա, յես մե-
ղավոր եմ, այս Թեքո, դու իսկի Բդոյի նման չես,
վո՞նց ել հիմի իմ յերեսին մտիկ ես տալիս»:

Մտամոլոր դես ու դեն եր ընկնում, յե-

լեխան շարժվում եր ու կարծես մորթում եյին
Ալվանին։ Նա կարծես հավատում եր չարքերի
գոյությանը. կուզիկ տերտերակինն աչքի առա-
ջով անցնում եր դանդաղ։

—Աման չարքերը… չե, չե, չեմ հավա-
տում… Զուլումը, Նաթելը… հիշում եր նրանց
ու հանգստանում։

Բդոն զգուշացավ. բանի՞ որ եր իրիցկինը
չեր հեռանում նրա շեմքերից։

—Դու դրան լավ հետեւ, բռնոթին ինձ
վրա, —դուքան գնալուց առաջ պատվիրում եր
Բդոն իրիցկնկանը։

Յերրորդ որն եր, ինչ Ալվանը փակված եր
տանը։ Գզգզված մազերը թափիել եյին թի-
կունքին։ Աչքերի տակը կապտել եր, հեկեկան-
քից ձայնը խզվիլ։

—Ո՞ւր են Նաթելը, Զուլումը—չեն յերե-
վում… հոգնած հուսահատ նստել եր նա լու-
սամուտի գողին ու արցունքոտ աչքերը ճամ-
քին կցիլ։ Մոր բաղդադին՝ արցունքով թրջված՝
ընկել եր ծնկների վրա։ Կուզիկ իրիցկինը չար-
ժպիտը գեմքին պտտվում եր լուսամուտի տակ։

—Եղակես մնա, վոր առանց մարդիդ հարց-
նելու դես ու դեն չգնաս։ Ի՞նչ զործ ունես
խալիսի հարսների ու տղերանց հետ։ տանը
նստի…

Ալվանն ատամները կբճտելով՝ լուսամուտի
դողից հեռացավ:

— Քանի եղածես սիրտդ փիս ա, Բղոն ել
լով չի յոլա դնա հետդ, քո զլխավորին դու-
հնազանդվի:

— Գնա, կուղիկ սատանա, դնա, — բղավեց
Ալվանը ներսից:

— Սատանա, սատանա, — մատը սպառնա-
լով թափահարեց տերտերակինը: Սպասիր, հենց
գիր անեմ, վոր գժվես, չոլերով դիպչես:

իրիցկինը դնաց:

Ալվանն այնքան եր քաշքշել հագի շորը,
վոր պատառուտվել եր:

«Վոր գժվես, չոլերով դիպչես» կրկնում եր
նա կուղիկի վերջին խոսքերը և աչքերը սար-
սափով բացած, բռնում եր զլուխը.

— Աման յեկեք, ազատեցեք... մայրիկ,
մայրիկ. — մոր բաղդադին սեղմեց նա աչքերին
ու շուրջերին.

— Նաթել, Զուլում...

Տան մեջտեղը կանգնած — մտածում եր նա:
Հանկարծ նրա աշքերում մի վճռական փայ
անցավ.

— Ա՛յ, — բարձրացավ լուսամուտի դողը և
ուզում եր ցած թուչել, — թող լակոտը վեր ընկ-
նի, — ձեռքերը բարձրացըրեց նա: Մեկ ել հետ
քաշվեց. Լիպոն հեղինեվ կանգնեց քըռջ առաջ.

— Ա՛յս, Լիպո, վոր չզայիր...

Իիպոն զարմացած նայում եր բրոջ անսով-
պոր դեմքին:

Ալվանը զրկեց նրան:

— Թե մեծ լինելիր, Իիպոն, ի՞նչպես կը-
պատմելի քեզ... Յես ես տանից դուրս կդաժ,
դու ել ինձ հետ կապըես համ...

Արել մայր եր մտել:

Ալվանը յեղբորը ճամբու յեր պցում, հան-
կարծ զլուխը պատպեց, ծնկները թուլացան,
նստեց շեմքի քարին:

Իիպոն քաշում եր նրա փեշից.

— Գնանք Ալիկ...

Գործը վերջացրած՝ թեվանը տուն եր գը-
նում: Կանգ առավ լուռ:

Ալվանն ամոթից մեռավ, ուզում եր ներս
փախչել. Թեվանը նրան պահեց.

— Կաց Ալվան, կաց, եղ ի՞նչ ես յեղել: Ալ-
վանը մերկ վոտքերը քաշեց փեշերի տակ, և
ձեռքերով փորը ծածկեց:

Ալվանն ուզում եր փաթաթվել թեվանի
վզով, ուզում եր աղաղակել՝ «ազատիր ինձ»,
բայց ամոթը բռնում եր աչքերի տոտջը, սար-
սափը բերանը փակում եր:

Թեվանը դողում եր հուզմունքից, նրա
ձեռքերն Ալվանի կըծքին դիպան, նա զրկեց
Ալվանին:

— Ալվան, թող Բդոյին...

Ալվանը կմկմաց. չեր հասկանում ի՞նչ եւ կատարվում:

—Թեվո՞յ, զալիս եմ...թեվո՞յ, յերեխով եմ,— յերեսը ծածկած ուզում եր ներս փախչել:

Լիպոն արտասավեց:

—Բեռի ջան, Ալիկին տար...

—Ալվան, չեմ թողնի եղակս, ափսոս ես, Ալվան ջան ի՞նչ անենք, վոր կնիկ ես դառել, դու մեղավոր չես:

Թեվան, —հեկեկում եր Ալվանն ու արտասունքների միջից պատմում եր, թե ինչպես իրեն ամուսնացրին.

Ալվանը լոեց ու թույլ գլուխը հենց պատին:

—Դե դալիս ես. հենց եղակս զնանը, — ինդրում եր թեվանը:

—Ամոթ եմ անում... չե, չե մի ուրիշ որկդամ, — ու խելագարի պես փախսավ:

—Ալվան, Ալվան, —կանչում եր թեվանը:

Լիպոն զնաց բրոջ հետեից: Թեվանը ծովեց դեպի Սաքոյենց տուն. հենց անկյունում հանդիպեց Բդոյին, իրար խեթեցին. Թեվանի արյունը յեռ յեկավ:

—Հենց եստեղ մարդ սատկացնի. — շնչաց նա. իսկ Բդոն գլուխը կախ մտածում եր. «Ալրանք են իմ գուքանի թշնամիները, մուշտարուս յետ տվողները»:

Ալվանը ճրագը վառել եր ու շտապ համարում եր իր շորերը:

—Պրծավ, ել Բդոյի մոտ յես չեմ ապրի,
ել Բդոյի ծոցին յես չեմ ընի. ախ թեվան ջան,
ի՞նչ լավ ես սիրում, վոր տղամարդն իս դրու-
թյան մեջ կնիկարմատին կսիրի, թեվանը վոչ
վորի պես չի, —խոսում եր ինքն իրեն ու հան-
գստանում:

Շորերը մի մեծ բոխչա արեց, մատը շըր-
թունքին կանգնեց:

—Հա, կզնամ Նաթելի տուն...

Վոտնաձայն լսվեց:

Ալվանն իսկույն բոխչեն գցեց թախտի տակ
ու յեղբորը մյուս դռնով ուղարկեց:

IX

Զմեռվա խոր գիշեր եր:

Թամին վզզում եր ու ձյունը թոցնում: Թի-
փին մարդ եր խեղզում:

Գյուղը քնած եր:

Զարչի Բդոյի դուռը ճռաց... Ալվանը ճը-
չալով փովեց կապած շան կողքին, ձյունի
վրա:

Շունը վնգստալով պտավեց նրա շուրջը:

—Վայ, վայ, մեռա, աման, մեջքը՝ ու Փ,
—ճչում եր Ալվանը:

Բդոն տուն ընկավ, ծնկները բռնեց և ըն-
կավ մեծ սնդուկի վրա. կողպեքը աիրոյ պես

ծանր հառաջեց: Շշնջաց՝ ձեռքը կողպեքի վրա-
սեղմած:

— Յա դովրան, յա աստված.. ո՞ֆ տուն
քանդողներ, կնկաս միտքն ել խառնեցին... ա-
սում եր կբռնեն, կխայտառակեն... վորտեղ
ենք հասել. Բդոն խեղճանար...

Զամիչը, լուցկին ու շաքարը սև բոլոնների
պես նրա ձեռքի տակից փախչում ելին: Գը-
լուխը սնդուկին դրած՝ Բդոն հիվանդի պես գա-
լարվում եր:

Ալվանը փովեց Նաթելի դռան առաջ.
— Վայ...

Քնաթթաթախ Նաթելը վեր թռավ անկող-
նուց, մի վայրկյան շփոթված սլատվեց մոթ-
խրճիթում, ապա դուռը բացեց:

Ալվանն ընկած եր շեմքում, Ալվանից ար-
յուն եր հոսում:

— Աղջի, Ալվան, Ալվան, — զոչեց Նաթելն ու
մերկ բազուկներով բարձրացրեց նրան, ներս
տարավ, դրեց անկողնու վրա:

Քամին վոռնալով ձյունը ներս թափեց:

Մինչև Նաթելը հուզմունքից դողալով
ճրագն եր վառում, Ալվանը յերեխան վիճեց...

Նաթելը սպրանել եր:

— Բդոն մարդասպան... Բդոն թող պարձե-
նա... բա ուր ե մեր իբավունքը...

Նաթելը մոռացել եր դուռը ծածկել, քա-
մին ձյունը ներս եր լցնում:

Գլխաբաց ու շակած թեփանը՝ Նաթելի
գոհովը դիպավ։ Շների հաջոցի վրա արթնացել
եյին մի քանի ուրիշ գյուղացիներ ել—նրանք
վաղելով յեկան շեմքը։

—Արա ես ի՞նչ խաբար ա:

—Ի՞նչ ա պատահել:

—Ես ի՞նչ կնիկարմատի ձեն եր...

—Թողեք յես նրան խեղդեմ, —բղավում եր
թեփանը։

—Յավաշ...

—Համբերի, թող լիսանա, —քաշքշում եյին
գյուղացիները։

—Ամսթա, դինջացի։

—Բա նա մի կնիկարմատի սպանի, —գո-
չում եր թեփանը։ Նաթելը բռնեց նրա թեփից.

Բգոն շապկանց կանգնել եր շեմքում և ար-
յունն աչքերը կոխած՝ բղավում եր։

—Հը, դեհ գնա, անզգամ, յես քու...—
Զյունախառը քամին շրապում եր Բգոյի յերե-
սին, նա ատամները կրճտում եր, —բող Նաթե-
լի հետ ես հնկերացել... թրիք թափող թեփոյի
շնքովն ես փաթաթվում... ընդուր չես ուզում
հետս քնել. բա Բգոն դդակ չի դնում, բա Բը-
գոն քեզ սադ կթողամ...

Քամին վզգում եր ու ձյունը լցնում Ալ-
վանի յերեսին. հա հեռմ եր ծանր ցավերից։

— Նա..թե..լը քեզ բըռ..նել կը..տա. դե-
ղը կը..խայտառակի, — հեկեկում եր Ալվանը:
Քամին պատվելով բերում եր արձագանքը
Բըռ..նել...

Շունը դնջնջալով լիզում եր Ալվանի սառը
յերեսն ու մերթ-մերթ ծառս լինում դեպի
Բդոն:

— Հո՛, հո՛, հո՛, — հրհոաց Բդոն, — թող բըռ-
նեն. են յերկուսին, վոր դուրս զցեցի, ով կա-
րացավ քեն հանի, — ապա շունչը կտրված շա-
րունակեց. — գնա՞ վորտեղ ուզում ես դան-
դատվի... յես ել իմ շտուկներն ունեմ. տունա-
քանդեցիր, դուքանս քամուն տվիր, ախպորդ
համար եմ աշխատե՞լ, վոր փեշը հաց, կարտով
լցնե՞ս...

Բդոն բոռնցքները սեղմած՝ դողում եր
շեմքում:

Ալվանը մի քանի անգամ շուռ յեկավ կող-
քերի վրա, հավաքեց վերջին ուժերն ու վեր-
կացավ տեղից,

— Սպանե՞ց, բռնեցե՞ք...

Քամին խեղգում եր նրա ծայնը: Շունն
իրեն կտրատում եր:

Ալվանը վոտաբորիկ վազում եր, սայթա-
քում եր, ընկնում: Մազերը, զիխի շորը թափ-
վել եյին թիկունքին. նա թուլացած եր. քիչ եր-
մնում սեծքի վրա ընկներ. քամին հրում եր և
ուշի տալիս:

Բդոյի ծնկերը թուլացան, լեզուն կապվեց՝
— Հը՞, դուքանս կփակեն..հը՞, սավսեմ կո-
րած եմ... դնամ բերեմ, չե, կանչեմ..

Խենթի նման նա վաղեց մինչև փողոց,
վոտքերն առաջ ու հետ դցեց ու տեղում կան-
գնեց.

— Ալվա՞ն, նամուս արա... .

— Ալվանը չկար:

Թեվան մենք եգուց նրա դատը կտեսնենք,
Թեվանը ցած ձայնով հարցըց:

— Ալվանը հո գժվար չի՞...

— Մենք տեսանք,

— Մենք վկա յենք.

— Շան վորդի Բդա...

Գյուղացիների խումբը շատացել եր:

Նաթելն Ալվանի հոգսն եր քաշում, իսկ
դուրսը խոր զիշերվա մեջ՝ զյուղացիները խո-
սում եյին: Մինչև լուսաբաց Թեվանը Նաթելի
շեմքից չհեռացավ.

Լուսաբաց եր: Պողոսենց աան մեջտեղում
Պողոսն ու Ղահրին կանգնել եյին շվարած:
Բդոն՝ յերեսը դեղնած, աչքերը մանրացած ու
կարմիր, ուսերը ներս քաշած՝ պատմում եր:

— Ախը ձեր աղջիկը վոր եղ նամուսի տերն
եր, դուք վճնց իմ շնչին կապեցիք. աչք տըն-
կեց, ամոթ ա ասել, անփոխան Թեվանին ու
տանիցս փախավ...

— Վայ, դետինը մանեմ, — ծնկին խփեց
Դահրին ու ճալվերը քաշեց:

— Հետո ել կասեք Բդոն լավ փեսա չեր.
ախպեր, իրիցկինը ձեղ ամեն բան կպառմի,
տեսեք ինչքան եր բացվել, վոչ մարդ եր ճա-
նաչում, վոչ տուն, փեշը դիմին զցած՝ գնում
եր ժողովներ:

Պողոսը փափախն իջեցրեց աչքերի վրա:

— Փիյա՛, հրես հա անպատվություն:

Լիովոն անկյունում կուչ յեկած՝ ականջ եր
դնում:

Մարդ ու կին Բդոյին սիրու եյին տալիս,
իսկը չեյին կասկածում, վոր Բդոն հանցա-
վոր եւ:

— Զահել ա, խելքիդ հանել են, մեր բարե-
կամությունը վոտնատակ մի տա, — համոզում
եր Պողոսն ու քիչ եր մնում Բդոյի վոտներն
ընկնի:

— Սաղ են լիրը Նաթել մաթելի սարբածն
ա, ավելացրեց Դահրին, — թե չե յես Ալվանին
հնենց եյի պահում, վոր մինը յերեսը չեր տես-
նում:

Բդոն՝ ձեռքերը գրպանում, ուսերը վեր-
վեր եր շարժում. վոտն առաջ զցեց, վոր դուրս
գնա, բայց մի բան հիշեց:

— Մեր դորձը գլուխ չի գա....

— Վժնց, վժնց, — վրա ընկավ Պողոսը:

— Ենա վոր իրենց կոռոպերատիվն են բերում, յես ի՞նչ գիտեմ, կարդալու աեղ են բացում։

Վոնց վոր բռնոթին քթովը տային, ենակես յերեսը կնճռուեց Պողոսը։

— Վայ, քու տունը չքանդվի, եղ դհա ուշը զուլում եր. հացներս խլեցին։ Լծկան ու կով ծախեցի մայտ շինեցի, ասի մի բանի տեր ել մենք կլինելինք… մեր յարեքը կսաղանան…

Նա թույլ թույլ նստեց թախտին ու գլուխը կախեց։ Դահրին փեշը բաց թողեց։ Բդոնդուս գալու յեր պատրաստվում, Պողոսը աեղից կանգնեց։

— Բդոն ջան, մեր փողերի հարցը վո՞նց պիտի ըլի։

— Տնաշեն, հո չեմ փախչում, քու փողերը յետ կտամ։

— Ը ք ասում եմ վոր, — ծոծը քորեց Պողոսը։

Բդոն դուրս յեկավ։

Դահրին Պողոսին հրեց։

— Այ մարդ գժվել ես, փողերդ յետ առ, ո՞վ գիտի .. վոր ատկազ արած։

— Լավ, նա Պողոսի փողերը չի ուտի։

Կատաղած Դահրին դես պտտվեց, դեն պըտավեց ու հարձակվեց Լիսոյի վրա։

— Աստծու կրակը թափվի ձեր գլխին,
քվորով, ախպօռով մեր տան վրա սև բերիք:
Ուր առ հերն ու մերդ իրանց ծոցը չքաշեցին...

— Մի լավ տուր ե, մի լավ, — մյուս եղա-
մից բղավում եր հուսահատված Պողոսը:

Լիպոն աղաղակելով հազիվ դուրս փախավ
Դահրիի ձեռքից:

— Յես դնում եմ իրիցկնկանը հանդիպեմ,
դու ել քու փողերին յետեա: Կարգադրեց Դահ-
րին ու տանից դուրս յեկավ:

XI

Խոտի գեղերի ու պատերի տակ շշուկները
ըլջում եյին:

Հացթուխը թոնրի շրթին, Ալվանի պատ-
մությունը լսելով մոռանում եր. հացը վա-
ռում: Զահել հարսները ծեծում եյին յերեխա-
ներին, փեշներն աղատում, վոր մի կուշտ խո-
սեն:

Ծեր ու յերիտասարդ գյուղացի վիճուժ
եյին. նրանք միանման չեյին դատում:

— Հրեն գործը սուղումն ա. Բդոյին եր
Պողոսին ել նստացրել են. — հայտնեց Անդինը:

— Ուխայ, գեռ սատկացնեն եդ Բդոյին լավ
կլինի. — բացականչեց Նխշունը և շարունակեց
կարեկցությամբ. — Են խեղճ Ալվանը դժվար
հիվանդ ա. ասում են քացով ա մեջքին տվել:

— Սադ գեղի տուած դրանց պիտի դատեն, — ասաց Զուլումը, — վոր տեսնելիք նաթե-
մին, վժնց եր վոազ վոազ գնում գալիս՝ ել
դյուղիսորհդի նախագահի մոտ, ել դատարան:
Թեգանն ատում եր տերտերին ել պտի քաշ
տան...

— Վայ, վոտն ու ձեռս դողում ա, — ձայնը
դոդացնելով՝ մեջ մտավ Սալոմը:

— Վոր տեսնեք, Ղահրին մեռած ու ու թա-
ղած չի, հենց ա ձենը փորը գցել:

— Աղջի Սալոմ, յերեխեդ ճաքեց, — կանչեց
Սալոմի կեսուրը:

Բոլոր հարսների գնալուց հետո, միաց
Զուլումը՝ ձեռքը ծնոտին հենած:

Մի խումբ գյուղացիներ ել Հակոբի պատի
տակ եյին կանգնել:

— Քուհ, եղ Պողոսի նամուսին, ինչ պատ-
մի հասավ, — խոսում եր գյուղացի Հակոբը:

— Պողոսը նպատակ ուներ, վոր Ալվանին
Բդոյին տվեց:

— Բա՛, հնգերացել եյին, — պատասխանեց
մի ուրիշը:

— Զե, կարաը լավ չեկավ, նրանց աչքա-
դրած տեղը մեր կոռպերատն ա փոխվում:

— Ասում են Բդոն Պողոսի վողերը չի տա-
միս:

— Մին ա, դրանք իրար հետ յոլա չեյին

գնա: Նրանցից ամեն մեկը մի բան եր ասում
ու կամ փափախը դրստում, կամ վոտը գետին
քսում:

—Այ տղա թեփան, ի՞նչ արիք, —հարցրին
գյուղացիները թեփանին:

—Նստեցին ելի:

—Պահ, պահ, եդ թափուր ել բան, —դար-
մացական բացականչեցին նրանք:

—Զեզանից վկաներ ենք գրել հա. —հայտ-
նեց թեփանը:

—Ը..ը..ի՞նձ ել. —կմկմաց մի գյուղացի.

—Ախր...յես Բդոյից... ԶԵ, աղպեր, յես եդ
մարդուն փող եմ պարտ:

—Դուզն ասած՝ յես ել եմ պարտ. —միջա-
մտեց Սահակը:

—Այ մարդ, ի՞նչ եք չոլերով դիպչում,
անաշեն վախկոտներ, —ընդհատեց նրանց Ազոն,
—թեփան, ի՞նձ գրեցեք:

—Ի՞նձ ել գրեցեք. ի՞նձ ել, —հայտնեցին-
ուրիշները:

Բավական ժամանակ եր անցել. ձյունը
կիտվել եր նրանց փափախներին:

—Ադա, հերիքա, զնանք:

—Յես իմ ասած, Նաթելի կերած կաթը
հալալ ա, համա գործ տեսավ, —խոսում եյին
ճանապարհին:

Ձյունը վրա առավ: Նրանք փափախները
թափ տալով, ցրվեցին:

Թեվանն շտապեց Նաթելի տուն. Նրա սիրալը վառվում եր...

Հետեխց հասավ Սաքոն

— Հը՞մ, Թեվան:

— Հա՛, գնա՞նք:

XII

Մեծ ու պստիկ իրար խառնված, ձյունի յերեսով զնում եյին գյուղի դատարանը:

Տանը մնացած յերեխաները ճշում եյին մոր կամ տատի հետեխց: Են հարսները, վոր ստիպված ելին տանը մնալ, իրենց բարեկությունը յերեխաների դլխին եյին թափում:

— Բգոյի, Պողոսի դատն ա,— հայտնում եյին իրար ու շտապում: Կանչված վկաներն են-պես եյին շտապել, վոր մեկի տրեխի թելերն եյին առանց կապելու, մյուսի արխալուղն առանց կոճկել:

Զուլումն ել եր վկա, ամենից առաջ եր զնում:

Մեկ ել բոլորի ուշադրությունը գրավեց Թեվանը, վորի հետ սրթորթալով վազում եր փոքրիկ լիպոն:

— Մի մտիկ տվեր, Ալվանի աղաղերն ել ավկա, եղ պուճուր տեղովը պիտի խոսա:

Լիպոն Թեվանի հետ խօսում եր:

— Յես վոր գնում եյի Ալիկի կուշտը, ինձ Բդոն ծեծում եր, Ալիկը լաց եր լինում... են ել կասեմ, վոր Ալիկին սնիցը կապեցին:

Գյուղացիները մեծ հետաքրքրությամբ
մտաենում եյին փոքրիկ լիպիկին։ Նրա մահ-
կական աչքերում կարդացվում եր վստահու-
թյուն և զայրութ։

Փողոցները գատարկվել եյին, մի քանի շուն
ձյուղը հոտոտելով դեռ ու դեն եյին վաղում։
Վերջին անցորդը՝ շալում փաթաթված, դլուխը
կախ մի կին եր, վորի քայլվածքից յերհում
եր սրտի թունոտությունը։ Նա եղ կանչված եր
գատարան։

Դա Դահրին եր։

XIII

Անցել եր մի տարի։

Ալվանը կարում եր, իսկ Թեկվանը նստել
եր նրա կողքին։

— Ալվան ջան, լինչ լավ ես կարում, ժըս-
տում եր Թեանը։ — Դե թող մատներդ սկա-
չեմ։

Ալվանը մեղմությամբ հետ զցեց նրա ձեռ-
քը։

— Թեկո ջան, թող, վռաղում եմ, ես ա-
նաթելլ կգա, տեղ ենք զնալու։

Թեանն Ալվանի ձեռքի կարը բսում եր յե-
րեսին։

Յերկուան ել սիրում եյին իրար։

Ալվանը մեկ-մեկ տխրում եր ու զզվանքով
հիշում Բդոյի հետ ապրած որերը։

— ԹԵ ԵՆ ԺԱԺԱՆՅԱԼ ԵՍ ԽԵՂՔԻՆ ԿՈՒՆԵՋԻ...

— ԱԼՎԱՆ ՃՈՆ ԾԻՆԸ ԵՍ ՎԱՄ ՎԱՄ ԲԱՆԵՐ-
ՄԻՄՊ ՊՇՈՎՄ, — ԽՈՍՈՎՄ ԵՐ ԹԻԿԱՆՆ Ու ՊՐԼՈՎՄ
ԱԼՎԱՆԻՆ:

ՄԻ ՄԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՎՄ ԱԼՎԱՆԸ ՉԱՄ ՎԻՇ-
ՎԵԼ ԵՐ. ՆԱ ՀԱՄԱՐՃԱԼ ԵՐ ԽՈՍՈՎՄ, ԾԻԾԱղկոտ.
ՉԱՄ ԲԱՆ ԵՐ ԱՌՎՈՐԵԼ:

ԼԻՎՈՆ ԷԼ ՊՈՒՐԱՆ ՈՎՐԱԽ ԽԱՊՈՎՄ ԵՐ ԸՆ-
ՀԵՐՆԵՐԻ հետ, վազվզում: ՄԵԿ-ՄԵԼ յԵՐԵՄԸ
ԼԱՐԺՐԱԾ ՆԵՐՍ ԵՐ ԸՆԿՆՈՎՄ:

— ԱԼԻԿ, այ բռնեցի. — ՔՄՉՈՎՄ ԵՐ ԱՓՈՅԻՆ:

ԱԼՎԱՆԸ ՊՐԼՈՎՄ ԵՐ ՆԵՐԱՆ Ու ԱՂԻՆԴ ԱՂԻՆԴ
ՀԱՄԲՈՎԵՐՈՎՄ:

— ՀԵՇ, ... հԱՇ, ... ու, — ՊՈՒՐԱՆ աղմուկ
ԲԱՐՃՐԱՑՎԱՎ: ԿՈՒՐՃՔԸ ԲՐԱՆԱԾ, ՆԵՐՍ ԸՆԿՎ
ԶՈՎՈՎՄԸ.

— ԹԱՄԱՂԱ, թամաշա՝ ...

ԲՈԼՈՐԸ ՊՈՒՐՍ ԹԱՎԻՎԵցին:

ՓՈՂՈՑՈՎՄ իրար ոձիքից բռնած՝ քաշքըշ-
վում եյին ԲԳՈՆ, ՊՈՂՈՆ Ու ԿԱՐԱՎԱԿԵՄԸ:

— ՄԵՂԱՇ, տԵՇ, բա՛ց թողեք ինձ, յԵՄ
ՊՈՐՃ չՈՒՆԵՄ...

— ԶԵՇ... տԵՐՄԵՇ, ՊՈՒ ՎԼԱ յԵՄ, ՎՈՐ յԵՄ
ՆԱՊԴԻ ՓՈՂԵՐԸ հԱՇՎԵցի:

ԲԳՈՆ աշխատովմ եր աղատվել ՊՈՂՈՄ
ՃԵՌԵԼԻՑ:

— Գնանք, դնանք սուդը, իմ փողերը բեր...

— Այ, ա՛յ... — մի յերկու շրպպացրեց Բը-
դոյի սպրդնած յերեսին Պողոսը:

Տեր Կարապետը զոռից քրանել եր. Փա-
րաջի փեշը չեր կարողանում ազատել Պողոսի
բռունցքից:

— Հեյ... հույ, — բղավում եյին գյուղացիք
ու հավաքվում:

— Արա թափեցեք, տեր սուրբին սպանե-
ցին:

— Տո, Պողոսի փողերը կերել ա:

— Տերհորը վոտի տակ զցեցին:

— Տերտերակինը նաչար ա:

— Տեղն ա, հերու իմ մեռելին մի սաղ որ
տանը թողեց ու իրա ուզած կնունքն արագ. —
Բղավում եր վոխակալած Արշակը, վորի հա-
գուստը պատառութած՝ կախվել եր ծնկներին:

— Տո ա մոթ ա, թափեցեք:

Տեր Կարապետի գավազանը Լիպոն փախ-
ցրեց ու վրան հեծած ձի յեր քշում:

— Գնանք սուդը, ուր եք փախչում, — բո-
ռում ե Պողոսը:

Բդոյի գդակը փախցրել եր Ափոն ու ողում
ֆռուացնում եր:

Նախելն ու Ալվանը կանգնել եյին գեղջկու-
հիների մեջ ու աշխուժ խոսում եյին: Թեանն
ու Սարոն գյուղացիների հետ ծիծաղում եյին:

— Հերու խայտառակվեցին, ես տարի յել
իրար են ջարդում:

— Եսենց բան չեր ըլի, տերտերն ել ա
խառնվել, դու մի ասիլ հենց իրանք են չարե-
րը,—ավելացրեց Արշակը:

— Հայ...հույ, ճամբար ավեր, Պողոսի կնիկն
ա դարբել:

Դահըին ձեռքերը զցելով գալիս եր, առանց
շալի, դլուխը բաց, փեշն ել հավաքել եր արծա-
թի դուրիի մեջ ու բղավում եր.

— Այ չարչի շուն, մարդիս փողերը կե-
րապ. *

— Տա, գետնից կպած մուզմուզ, ուտիլ
չես... այ մարդիկ, դատաստան արեք...

— Պոհ, պոհ,—բացականչում եյին դյու-
դացիները:

— Հրեն-հրեն, հասավ,—բացականչում եյին
Դահըիի հետելից, վորը մոտեցավ ու մի լավ
բաժին Բդոյի գլխին:

— Շուն տերտեր, են վոր գալիս սուփըի
գլխին նստած լափում եյիր լավ եր, հիմի դու
ել ես ատկազ անոնմ, քեզ ել ա փողիցը բաժին
հասել համ...

Պառավ կանայք հուզված խփում եյին ծընկ-
ներին:

— Մեր տերտերին խայտառակեցին:

Նրանց հասան մի քանի գյուղացիներ, վոր

քաժանեն:

Դահըին գետնից վերցրել եր Պողոսի փառախը, թափ եր տալիս ու կատաղի բղավում.

— Տերտեր, են դու չեյի՞ր, վոր Ալվանի մետրիկը հինգ տարի մենծ հանեցի՞ր: Բոսաքդո, դու ել են չեյիր, վոր թալանով տունդ լցրիր...

— Ականջներդ փակեցեք, — խոնվել եյին գյուղացիները:

Եղպես իրար քաշքշելով գնացին:

Յերեխաների քեֆին քեփ չեր հասնի...մեկ Պողոսի, մեկ Բղոյի կամ տերտերի կոփին եյին անում, թափալվում եյին գետնին, հրհում: Լիպոն տերտերի գավազանին հեծած՝ դեռ ձի յեք քշում, Ափոն վազում եր նրա հետեից:

— Խախկ ելան գեղում, — ասեց Պուկաս Ապին:

ՆԱՐԳԱ

(Արահանգչուհու պատմածից)

Կի՞ն բաժինը վորոշեց ինձ ուղարկել շրջան՝
զեղջկուհիների մեջ աշխատելու—վորպես հրա-
հանդչուհի:

Յերևի գյուղ-աշխատողներդ դիտեք, ձեզա-
նից շատերի հետ ել պատահած կլինի, յերբ
նոր շրջան պիտի գնաս ու նոր աշխատանքի
անցնես—անհանգստանում ես. սկսում ես ա-
ռաջուց պատկերացնել, ծրագրել քո աշխա-
տանքն ու անվերջ զրա մասին ես մտմտում:
Հանդիպում ես մի փորձառու գյուղ-աշխատողի,
—ուրախությամբ մտերմանում ես նրա հետ,
բարեկամաբար զննում ես նրան, հետեւմ ես
նրա ասածներին և անպայման ցանկանում ես,
վոր փոխադարձորեն իրար ոգնեք: Գուցե դուք
ուրիշ փորձ ունեք, բայց ինձ հետ այդպես ե-
պատահել:

Մանավանդ աշխատանքի այդ բնագավառ-
ինձ համար միանգամայն թարմ եր. կանանց
մեջ գեռ շեյի աշխատել: Յերբեմն առիթ եյի
ունեցել կուսակցական ընկերների հետ խօսել
կին բաժնի աշխատանքների մասին ու նրանք
գլուխները պտտել եյին, կամ հեղնական ժպտա-
ցել: Զգիտեմ, հատկապես ինձ են այդպիսինե-

թը հանդիպել, թե շատերը կան նրանց պես, վոր իրենց պաշտոններից դուրս, անհատական խոսակցության ժամանակ՝ անենթաղրելի վերաբերմունք են ցույց տալիս դեպի այդ աշխատանքները։

Իսկ դուք գիտեք—կանայք ավելի քան ինքնասեր են ու անհամբեր. յես վրդովվում եյի, կրակվում և յերբեմն ել սկսում եյի ճառերով պաշտպանել մեզ։

Սակայն ծիծառելի յեր, մի՛թե այդ բոլորը նրանք չգիտեյին, կամ նո՞ր պիտի իմանային, իհարկե, շատ լավ գիտեյին. իրենք եյին ճառում ժողովներում, մենակ թե հոռետես եյին այդ աշխատապի վերաբերյալ, աշխատավոր կնոջ այժմյան պայմաններում։

Պետք է խոստովանել, վոր նրանք չափից ավելի հոռետես եյին ու անտարբեր, դրա համար յես վրդովվում եյի ու ասում։

— Դուք կոժունիստներ չեք, դուք ճառխոսներ եք։

Այժմ յերբ ինձ վորոշեցին ուղարկել՝ հենց այդ բնագավառում աշխատելու, խոստովանում եմ, վոր յես ել սկսեցի կասկածել ու դժվարությամբ համաձայնեցի։

«Գեղջկուհին կապված իր վոչխարի, թոնը, յերեխի հետ, ինչպես պետ ե նրան տանից դուքս քաշել ու բերել ժողովի, զրույցների. զե-

մեր պայմաններում դժվար է, իհարկե, դժվար
ե»—մտածում ելի յես ճանապարհին:

Այն շրջանում, ուր յես պիտի աշխատելի,
կենտրոնական մի գյուղում գյուղխորհուրդը մի
փոքրիկ սենյականման ծածկ հառկացրեց, վոր-
տեղ յես տեղափորվեցի:

Դուք զիտեք, վոր շրջանում աշխատողներն
ավելորդ վոչինչ չեն ունենում իրենց հետ: Ան-
կողինս եր, հագստեղենս ու մի քանի կարևոր
գրքեր և բրոշյուրներ: Զեյթ մոռացել նաև մի
քանի պլակատային նկարներ բերել, սենյակս
զարդարելու համար:

«Գյուղաշխատողի համար այդպիսի նկար-
ները շատ անհրաժեշտ են ու գյուղացու համար
ազիտացիոն»—մտածում ելի յես:

Դրանից ել հեշտ բան, իսկույն սենյակս
կարդի բերեցի ու մեջտեղում կանգնած շշնջում
եմ.

— Միթե նման չե կի՞ն աշխատողի սեն-
յակի... իհարկե նման ե,—պատասխանում եմ
յես ինձ: Ահա կարա Ցետկինը, աշխատավոր
կնոջ առաջնորդը, ահա ընկեր Լենինը, մեր մեծ
ղեկավարը. մյուս նկարը՝ բանվորուհիներ են
արտադրության մեջ, պայծառ դեմքերով, ապա
իմ գրքերը, բրոշյուրները, վորոնք անհրաժեշտ
են ամեն մի հասարակական աշխատողի համար:
Միթե այս բոլորն այսպես ազիտացիոն չեն ու

առաջմղիչ։ Ներս կտանի գեղջկուհին և կվոգեորդի:

Յես ժպտում եյի, ինձ մնում եր իսկական աշխատանքի անցնել։

Մի անգամ ել նայեցի սենյակիս պատեղին, մի անգամ ել ինքս ինձ հաշիվ տվի սենյակիս կարգավորման համար ու դուրս յեկա. ուզում եյի ծանոթանալ գյուղին և հանդիպել կուսակցական ընկերներին։

Գիտեք թե նոր մարդն ինչպես ե լինում. անվերջ չորս կողմու եյի նայում և արագ չեյի քայլում. ինձ թնում եր, վոր ծանոթս կանչում ե, իմ անունն ե տալիս... Հետ եյի նայում, այն ինչ կրթկոթան թուխաը ճուտերով շրջապատված գալիս եր իմ հետեից ու ծիծաղում եյի ամենքից թաքուն, ինքս ինձ վրա։

Հենց վոր մի գեղջկուհու եյի հանդիպում, վոնց վոր մեծ գյուտ արած աղաղակում եյի յես իմ մեջ. «Ահա սա յե, սրա հետ պիտի աշխատեմ»։ Ժպտում եյի և ուզում հենց եդ բռնկեյին խնդրել, վոր գար ժողովի ու աշխատանքն սկսել։

Հանդիպեցին յերկու ժպտերես գեղջկուհիներ, վոր յերկար նայում եյին ինձ և ուզում մոտենալ, յես ել եյի ուզում մոտենալ, մենք մոտեցանք։ Նրանք գարմանալի արագությամբ գլխի ընկան ու հարցըին։

— Դու կին բաժի՞ն յես յեկել...

Յես ժպտացի. յերեի գլխիս կարմիր թաշ-
կինակը հենց այդ եր ասում, և ինչ լավ եր,
վոր յես կապել եյի, թե չե կարող ե չնայեյին
ինձ վրա, յես ել անցնեյի ու այլպես շուտ
չսկսվեր մեր ծանոթությունը:

Մի անգամ գնացել եյի գյուղխորհուրդ և
այժմ ել կարող եյի գտնել, բայց դրանցից
հարցը, վոր ցույց տան. յես ուզում եյի, վոր
նրանք անպայման ինձ ուղեկցեն: Նրանք ինձ
հետ յեկան մինչև գյուղխորհուրդը և այն փո-
ղոցներով, վոր մենք գնացինք, հանդիպած
գեղջկուհիներին նրանք աչքով եյին անում ու
յերեի իրենք՝ գեղջկուհիները հասկանում եյին
թե ով պիտի լինեմ:

Յես ուրախ եյի, չեյի ուզում բաժանվել
այդ յերկու գեղջկուհիներից, կարծես պիտի
բաժանվեյի սկսածս աշխատանքից—դրա հա-
մար խնդրեցի, վոր նրանք անպայման ինձ մոտ
գան:

Այդ որն իմ նախնական աշխատանքները
վերջացրի: Ծանոթացա մի քանի կուսակցական
ընկերների հետ, կոմսոմոլների հետ, մի փոքր
ել ծանոթացա գյուղին և մի որվա մեջ կար-
ծես ընտելացա: Արտգ եյի բայլում, գործնա-
կան մտքեր եյին գալիս գլուխս, ինքը՝ աշխա-
տանքը կար, հարկավոր եր նրան դուրս հանել
խրճիթներից, անկյուններից, դրանք՝ գեղջկու-

հիներն եյին, իս նոր բարեկամուհիները:

Գնացի սենյակաւ Մաքումս նախապատրաստում եյի առաջին զրույցը կանանց հետ: Բավական դժվար եր. «Միջազգային այս բարդ պայմաններին պետք է գեղջկուհուն ծանոթացնել թե չե, նա պետք է իմանա, վոր ինքը յերկիրը պիտի պաշտպանի և միևնույն ժամանակ ու ուղարկանանամա».—ույսպիսի մտքեր եյին գալիս ու կենտրոնանում գլխումս, յես մեղավոր չեյի, ընդհանուր զրությունն եր այդպես Ճիշտն ասած մի քիչ ել յես դժվարացնում ու բարձրից եյի սկսել...

Յերեկոյան յեկան այն յերկու գեղջկուհիները, վորոնց հետ առաջին անգամ յես ծանոթացա. նրանց հետեից և ուրիշներն եյին դալիս, բարեում եյին և առանց քաշվելունստում:

Յես մոտիկից, շատ մոտիկից նայում եյի նրանց աչքերի մեջ, հետեւում եյի շարժումներին, ուզում եյի նրանց մեջ զտնել իմ և նրանց աշխատանքը, վորի մասին բավականաշափ մտածել եյի:

— Եստեղ ելի կին բաժին եր ապրում, — ասեց նրանցից մեկը:

Ու յես առիթ ունեցա հիշելու, վոր առաջինը չեմ յես, վոր ինձանից առաջ աշխատանք ե տարվել. յերեմն մարդ բոլորովին մոռանում ե այդ հանգամանքը: Հասկա, դրա համար ել

կարծես բոլորն ել ինձ լավ եյին ճանաչում ու
ծանոթ եյին սենյակիս բոլոր անկյուններին:

Նախ յես ուզում եյինքանց հետ շատ մոտ
ու հասարակ լինել, վորովհետև առաջուց զի-
տեյի, վոր գյուղում աշխատողն իր վարմուն-
քով, իր նիստ ու կացով պետք ե նրանց զրա-
վի ու չլսրտնեցնի: Ծիծաղը դեմքիս սկսեցի:

— Դե, սիրելի գեղջկուհիներ, դուք արդեն
դիտեք, թե կին բաժինն ինչ աշխատանքներ ե
տանում և մեր աշխատանքներին ել ծանոթ եք:

Բոլորովին մոռացել եյի նախառես կազ-
մած ծրագիրը և այժմ ուրիշ բան եյի ասում,
յերեկի այդպես եր հարկավոր և բացի այդ, հեշտ
եր:

Հա, ընկեր կին բաժին,— ասեց նրանցից
մեկը:

Յես նրան ընդհատեցի:

— Յես ձեր հրահանգչուհին եմ, ասա ըն-
կեր Աշխեն:

— Ընկեր Աշխեն,— շարունակեց նա—ես
կին բաժինները թեզ-թեզ փոխվում են, գալիս
են ու գնում: Հետո ելի թաղեն ա գալիս, ժո-
ղով ենք ունենում, պարապմունք են անում...
Ես ել հիվանդանում ա ու ելի գնում... Թաղեն
գալիս ա ու նրա հին պարապմունքն ա ասում,
հիմի բու զբիցը տեսնենք...

Յես հանկարծակիի յեկա, վոնց վոր մեկը

վզկոթիս խփեց. յես կարծում եյի, վոր իսկիր խոսել չգիտեն, մինչդեռ նրանք ինձ հիշեցրին մի բան, վորի մասին յես յերեք չեյի մտածել: Այժմ վոչ թե ծիծաղում եյի, այլ մտածում, թե ինչպիսի զրույցներ ունենալ, վոր նրանց համար հետաքրքիր ու կրկնված չլինեն:

— Այ, սրանից հետո յես յերկար կաշխատեմ եստեղ ձեզ հետ, — պատասխանեցի այն լեզվանի ու շատ յերիտասարդ գեղջկուհուն:

Յես նկատեցի, վոր նրանք իրար հետ վըսփսում եյին: Վորոշեցի այդ յերեկո մտերմական զրույց ունենալ, ծանոթանալ նրանց հետ և ապա կպարզվեր իմ աշխատանքի ծրագիրը:

— Իսկ ձեր տղամարդիկը թողնում են ժողովի դալ:

— Առաջ դժվար եյին թողնում... — մեկն սկսեց, մյուսն ընդհատեց ու ինքը շարունակեց.

— Հիմի սովորել են, ամեն բան սովորելու դրա յա, ելի; հիմի մեր կեսուրներն ել են կակդել:

— Այ մեր ընկեր Նարգոն, գալիս ա մեր կեսուրների կուշար, կողքներին նստում, հանաքներ անում, ծիծաղացնում ու մին ել տեսնում ենք՝ նանին ծիծաղը յերեսին ասեց. «Դնալավ, համա թեզ կպաս» — ասեց մի ուրիշ գեղջկուհի, մյուսներից ավելի հասակավորը:

— Նարգոն, ի՞նչ անուն ա, եղ ո՞վ ա, —

հարցրի յես հետաքրքրությամբ:

— Նարգիզ եր, Նարգո յենք ասում, բա չես
իմանում, կուսակցական ա, ինքն ել ժողով ա-
նող ա, մարդն ել կուսակցական ա:

* * *

Մեր խոսակցությունն ընդհատվեց, յեկան
ուրիշները. առանց հրավիրելու նստում եյին
անկողնուս վրա. «Յերեխ հենց այսպես ել պիտի
լինի», — մտածում եյի յես:

Նրանք շոշափում եյին շորերս, պելվում եյին
դեմքիս, ուզում եյին ամբողջապես ինձ ճանա-
չել:

«Մաերմանալու համար միթե հարկավոր
չե, վոր կենսագրությունս, իմանան» — մտածում
եյի յես: Սակայն ժամանակ չտվին ինձ մտա-
ծելու, իրենք հենց այսպիսի հարցեր եյին տա-
լիս, վոր պարզվում եր կենսագրությունս:

Աշխույժ զրույց բացվեց, իրենք ինձ, յես
իրենց հարցեր եյինք տալիս. յերբեմն այնպիսի
հարցեր եյին տալիս, վոր ճիշտն ասած դժվա-
րանում եյի պատասխանել:

Նրանցից մեկը կանգնեց, ուզում եր գնալ,
մյուսներն ել կանգնեցին ու բոլորը միասին
դնացին:

Եյդ գիշերը՝ նոր տպավորություններով՝
յերկար ժամանակ չեյի կարողանում քնել. «Յե-
րեխայի հետաքրքրություն ունեն մեր գեղջկու-

հիները, ինչքան հարցեր եյին տալիս, իսկ յես կարողանում եյի լրիվ ու հասկանալի պատասխանել: Միթե հենց նրանց աչքերում չեյի տեսնում Խորհրդային իշխանության նվաճումները. իհարկե, հեղափոխությունը նրանց ել ե նվաճել» — շնչում եյի յես, աչքերս հառած ցածրիկ առաստաղին:

Շուռ յեկա կողքի. աչքերս վակվում եյին.

«Իմ գեղջկուհիները ... իմ նոր աշխատանք...» Գեղջկուհիներն ինձ շրջապատած տանում եյին:

Յես տեղեկացա առավոտը: Առաջին անգամ պիտի մասնակցեյի զյուղական կոմբջիջի ժողովին:

Ժողովը դռնբաց եր, զյուղիսորհրդի սենյակը լիքն եյին. յերեխ մի տասը հոգի կլինեյին կուսակցականները, իսկ մնացածներն անկուսակցականներ եյին: Կային կոմսոմոլներ, կոմսոմոլիստ աղջիկներ, նույնպես մի քանի գեղջկուհիներ: Յես բնագրորեն նստեցի գեղջկուհիների կողքին, վորը նրանց ուրախացրեց ու իրար սեղմվելով ինձ տեղ արին:

Բջիջը լսելու յեր զյուղկոռալի աշխատանքների մասին. զեկուցելու յեր վարչության անգամը: Նտխագահն իր տեղն անցավ ու ժողովը բացվեց:

Իմ ուշաղը ությունը գրավեց նոր ներս

մանող, խոշոր կազմվածքով յերիտասարդ մի կին. հազնված՝ ինչպես բոլոր դեղջկուհիները. սիրուն գեմք ուներ: Սակայն ինչու յես այնպես յերկար եյի նայում նրան, դռւցե նրա համար, վոր ուղում եյի և կարծես գանում եյի վորոշ տարբերություն նրա ու մյուս դեղջկուհիների մեջ:

Սրա զլիսի շորն ամուռ եր կապված ու աչքերը չեյին ընկնում. սրա շարժումներն ավելի ազատ եյին, համարձակություն կար դիմագծերում և ավելի կազմակերպված նայվածք ուներ: Յերբ կողքից եյի նայում, լուրջ եր. յերբ ուղիղ աչքերի մեջ եյի նայում, կարծես ժպտում եր: Նա բարեեց և նստեց առաջին շարքում:

— Նազո՞ն, — փսփսացին կողքիս դեղջկուհիները:

«Յերեկ լսեցի նրա մասին, այսոր հանդիպեցի նրան» — մտածում եյի յես ու հանգստանում, ինքս ել չգիտեյի թե ինչու:

Յես աչքս չեյի հեռացնում նրանից, իսկ նա ինձ վրա խկի չնայեց:

Բջիջը նոր եր ինձ համար, հազիվ թե նրան ծանոթանայի. իսկի կարգին չլսեցի կոռպերատիվի գեկուցումը. մինչ մտածում եյի թե ինչու նարգռն ինձ չնկատեց, միթե աննկատելի եյի, մյուս դեղջկուհիներն այնպես շուտ եյին ճանաչում...

Մեկ ել լսում եմ, վոր նարգոն ե խոսում։
— «Մեր կոռպերատիվը հնենց ել վոր լավ
չի կանգնած. կուլակներ կան, վոր ելի կոռպե-
րատիվը խառնում են։ Ու մեր կոռպերատիվ
վարչությունը վոնց վոր խաթր ա անում նրանց
— ես մինը... կոռպերատիվը գեղի աշքն ա,
ընդուր վոր առնելն ու տալը նրա հետ ա, պետք
ա աշըը հեչ չփակի. վոնց վոր թխոկան մերը
չի, հնենց ել մեր կոռպերատիվը չորս կողմե-
մերին պետք ա չքափորին ու միջակին հավաքի,
վոր գրանք առնեն, տանեն. — են ժամանակը
կասեմ, վոր կոռպերատիվը նպատակին ա աշ-
խատում։ Գեղացու ուժի համեմատ տպրանք
բերեք, թե կտորը, թե ուտելիքը, ընդուր վոր
գեղացին թանկ բան կարում չի առնի։ Մին ել
եմ ասում՝ պետք ա կոռպերատիվն ինքն իրան
լավ հասկանա ու իմանա, թե ինչ թափուր դորձ
ա անում»։ — Նա վերջացրեց ու նստեց։

Յես մտածում եյի նրա ասածների շուրջը,
ուրիշներին չեյի լսում, վոր նույնպես խոսում
եյին։ Կարծես մեկը հարկադրում եր ինձ, վոր
յես ել խոսեյի, բայց լինչ, չե վոր նարգոն ա-
սեց։ Յես զիտեյի, թե ընկեր Լենինն ինչ ե
ասել կոռպերացիայի մասին, զիտեյի կոռպերա-
ցիայի լողունգները, իսկ այդ միջոցին տատան-
վում եյի խոսել։

«Լավ, մի ուրիշ անդամ», մտածեցի յես

ու շրթունքներս պինդ փակեցի:

Ամեն մեկը մի կարևոր խոսք եր ասում

ու նստում:

— Մեր կոռպերատիվը շապկեղենի կտոր
չունի:

— Շաքար ենք ուզում—մեզ պեսով են
տալիս, մենք շաքար ենք բանեցնում,—ասեցին
կողքիս գեղջկուհիներն ու նստեցին:

«Ինչ վոր ասում են սրանք՝ հասարակ բա-
ներ են, յես դրանցից բարձր բաներ գիտեմ ու
կարող եմ ասել»—մտածում եյի յես և սկսում
հպարտանալ. յերբ նայեցի նարգոյին, կարծես
թե ասում եր.

«Քաղաքից ես յեկել, մի տեսնանք, խո-
սիր, քու դեկավարությունը»:

Յես ամաչում եյի, շատ եյի ամաչում, մա-
նավանդ իմ մեջ մի փոքր ինտելիգենտական
կասկածամտություն կար, և մի քիչ ավելի ինք-
նասներ եյի:

Ժողովից դուրս յեկանք, ուզում եյի նար-
գոյի հետ խռուել, բայց նա շատապում եր ու ելի
ինձ վրա չնայեց:

Յես պիտի կապ հաստատեմ ու մոտեցա.

— Բնկեր նարգո, մեր կին բաժնի աշխա-
տանքներին դուք ել կողներ, այ, շուտով պատ-
գամավորական ժողովների վերընտրություններն
են սկսվում, մենք միասին կաշխատենք,—Ժըլ-

տացի, հենց միանգամից սկսեցի ու այնպես սովորական թվոցին իմ ասածները, յես այդ գգացի:

Նա ծիծաղեց, յես սճսեցի հուզվել. միթե ինձ վրա յե ծիծաղում, սակայն յես իրանից մի քիչ եմ յերիտասարդ ու յերեխա չեմ:

Նա խռուց:

— Դու զիտես, վոր եստեղի կնանոցը պետք ա զուսվ կապես աշխատանքներին, թե չե վոր իրանց թողաս, տեղներիցը չեն շարժվիլ: Դուզ ա, ժողովին կդան, կլսեն, համա զործն իրանք անելու չեն խառնվիլ: Դրա համար պետք ա զործը բովանդակ ըլի ու նյութ ունենա, վոր իրանք եղ իմանան ու մասնակցեն: Ախըր յես դրանցից եմ, յես զիտեմ, չե...—Նա այդ բոլորն ասեց վճռական ու համոզված ու դարձաւ ծիծաղում եր:

Այլիս նրա ծիծաղից յես չեյի նեղանում, յես ուզում եյի, վոր նա շարունակեր, խռուց իմ աշխատանքից:

Աւրեմն, ընկեր Նարդո, դու ինձ կողնիս, զիտես, յես առաջին անգամն եմ եստեղ աշխատում:

Նա այդ զիտեր, հասկացել եր, ավելորդ եր իմ ասելը: Գլխով արեց:

— Արի դնանիք իմ սենյակը, —խնդրեցի Նարդոյին:

— Եսոր չեմ կարող, մի ուրիշ անգամ,—
պատասխանեց Նա, ապա նայեց ինձ, յերեխ
նկատեց, վոր տիսրեցի, տվելացրեց.

— Մի վախի, իրար հետ կաշխատենք, դու
հլամ թաղա յես, անփորձ ես:

* * *

Տուն գնացի, թեյի պատրաստություն եյի
տեսնում, բայց միննույն ժամանակ չեյի մո-
ռանում նարգոյին:

Սենյակումս մենակ եյի ու պատերն ան-
գամ աղաղակում եյին. «Աշխատմնը, աշխա-
տանք». յես սկսում եյի անհանգստանալ, նոր
յեռանդ եյի ստացել և ուզում եյի հատկապես
այդ աշխատանքը լավ կազմակերպել, վորպեսզի
կարողանալի հեգնողների բերանը փակել:

Հրահանգ ստացա, պիտի գնայի ուրիշ գյու-
ղեր, և այդպես մի շաբաթով բացակայեցի իմ
մշտական գյուղից:

Խոստովանում եմ, շատ եյի ջարդվում,
ապա շատ գյուղերում հիասթափվում եյի. կա-
նայք չեյին գալիս ժողովի, շատ տեղերում
ուղղակի չկարողացա նրանց հավաքել: Յեթէ
գալիս եյին, իմ ասածները չեյին հասկանում,
հավատացնում եմ շատ պարզ եյի խոսում: Մա-
նավանդ քրտնում եյի, յերբ խոսում եյի, խո-
սում, իսկ իրանք սուս նստում եյին: Յես նրանց
անունները շուտ սովորում եյի, հենց իրանց

անուններով եյի կանչում, ուղում եյի, վոր իրանք ինձ հարցեր տան։ Ի՞նչ եյին մտածում այդ կանայք, հենց միայն ինձ եյին նայում և իրար մեջ փսփում։

Ծատ քիչ բան գլուխ յեկավ։ Վորպես թե աշխատանքներս վերջացած համարելով՝ վերադարձա, սակայն յես բոլորովին գոհ չեյի իմ աշխատանքներից։

«Իզուր չեր, վոր ասում եյին՝ այդ աշխատանքն արդյունք չի տալիս, մի՞թե յես սեղավոր եմ, աշխատում եմ ծըագրված, յերեի հենց առաջուց այստեղ աշխատանք չի տարվել, դրա համար դժվար ե, ախըր ինչու չեն աշխատել, ինչու յեն աչքաթող արել։ Մատանջվում եյի և միայն այդ ժամանակ եր, վոր հիշում եյի, թե ինձանից առաջ պետք ե վոր աշխատանք տարվեր։

Այնպիս հոգնած ու փոշոտ եյի. արեն ել այրել եր յերեսս, յերբ նայեցի կոտրած հայելու մեջ խոկական զնչուհու եյի նմանվել։

Մաքրեցի վրայիս փոշին, լվացվեցի ու պառկեցի անկողնուս վրա։

«Թող իմանան, վոր շրջանում աշխատել այն ել կանանց մեջ, հեշտ չի. իսկ իրանք քաղաքում նստում են ու հրահանգներ գրուի։ Հիմա արի ու դրանց միջազգային այս բարդ դրությունը բացարի, չե վոր նրանք ել ձայն։

ունեն, հավասար մարդիկ են, պիտի իմանանք
թե չե»:

Տիրությունից սիրոս նեղվում եր. ձեռ-
քերս դրել եյի գլխիս տակ, վոտքերս խփում
եյի անկողնուս և յերեխայի պես թնկթնկում եյի:

Դուռս թրսկացըին, վեր թռա, հենց այդ-
պես ել ուզում ելի, վոր խանգարեյին իմ մտքե-
րը: Ներս մտավ Նարգոն, յես կրկնակի ուրա-
խացա:

— Հը՛, ընկեր Աշխեն, չեյիր յերեռում, մի
յերկու անգամ յեկել եմ ու յետ դառել,—ասեց
նո ծիծաղելով:

Յես ուրախ եյի, պատերի նկարներն ել ու-
րախ եյին՝ իմ հյուրի համար:

— Յես գնացել եյի ուրիշ զյուղեր, — պա-
տասխանեցի Նարգոյին և խնդրեցի, վոր նստեր
անկողնուս վրա. Կա չեր համաձայնում, բայց
յես շատ խնդրեցի:

Զե՞ վոր մարդ յերբ մտատանջություններ ե-
տնենում, թեթևանալու համար՝ ցանկանում ե
մի մոտիկ մարդու հայանել. մանավանդ կանայք
անպայման այդպես են:

— Ընկեր Նարգո, դու շատ ճիշտ եյիր ա-
սսում, մեր գեղացի կանայք լինչ դժվար են
հավաքվում ու հասկանում: Յես մի բան եմ ա-
սում, նրանք ուրիշ հարցեր են տալիս. մին եւ
տեսար մեկն ասեց.

«Մենք չքավոր ենք, մեր կովը սատկեց, բայց կառավարությունը փող չպետք է տա»։ Մարդու ուղղակի շշմում է։ Հենց ուզում եյին շուտ իրանց տները գնալ։

Նարգոն շատ հանգիստ լսում էր. կարծեաւ ասում էր՝ այդ այնպես սովորական և ու դու միամիտ ես վրդովվում։ Հանկարծ սղատասխանեց։

— Ընկեր Աշխեն, դու մեր գեղացի կանանց ըտենց մի հաշվի առնիլ, յես ասում եմ ըտենց սխալ ա. կհասկանան ու հասկանում են։ Նրանց միաբը հլա դեռ խամ ա, դե հո միանգամից չպետք ա փոխվեն. յես վոր ասում եմ դժվար ա, հո չեմ ասում՝ թե բան չի դուրս գալ։ Նրանց միջին են տեսակները կան, վոր տղամարդից ել գործքով են. մենակ պետք ա եք տեսակներին ճարել ու առաջ դցել։ Դու թաղա յես, հլամ թաղա յես, կծանոթվես։

Նարգոյի ուրախ ու համոզված տոնը յետ մղեց զլիսիցս այն, ինչ վոր մտածում եյի. նուրից թարմ մտքեր արթնացան ու յես ել ուրախ նայեցի Նարգոյի աչքերի մեջ, ուզում եյի հարցնել. «Ասա, Նարգո, դու կարգացել ես Լենին, Մարքս»։ Բայց չե վոր չեր կարդացել, ինչու հարցնեյի, ինչու հիշեցնեյի, վոր նա կարդացած չեր. յես հետ կանգնեցի այդ մտքից։

Այժմ մի ուրիշ բան. յես ուզում եյի շատ

մոտիկից ճանաչել Նարգոյին: «Ո՞վ ե յեղել Նարգոն», ուղում եյի խոսակցությունը փոխել. յերեկոն ել տրամադրում եր մտերմական խոսակցության. «Ճիթե անվերջ պիտի խոսեյինք աշխատանքներից, իհարկե, չե, ինչու չենք իրարից հարցնում՝ ով եմ յես, ով ե նա»:

— Մի քանի վայրկյան յերկուսս ել լուռելինը. Նարգոն նայում եր պատերին ու ասեց.

— Մեր հրահանգչուհիների սենյակները, վոնց վոր իրար նուան մի նկար նկարեա՝ ըտենց են սարքի բերում. ես թախտն իսկ եստեղ եր նրա ժամանակը, ելի ըտենց նկարներ եր կըպցը ել ու ելի ետքան գրքեր ուներ: Համա նրա կուշտը յես մի անգամ եմ յեկել, հավանում չեյի. վոչ վոքի հավանում չեր ու իրա գործն ել չեր անում:

Անսպասելի կերպով հարցրի.

— Ընկեր Նարգոն, վո՞ր թվից ես կուսակցության անդամ:

— Յես կուսակցության մեջ եմ 25 թվից. զրանից առաջ ել, կոմսութով եմ յեղել:

— Ինչի՞ յես մտել կուսակցության մեջ, — մեքենայորեն հարցրի յես ու հետո զգացի, վոր անտեղի հարց եր:

Մի թեթև ծիծաղելով, մի թեթև հանդիմանելով, Նարգոն պատասխանեց.

— Են մարդը, վոր չիմացավ, թե ինքն ինչ

առ ու ինչի համար ա կուսակցության մեջ մտել,
եղ թափուր մարդին, ըլի կնիկ թե տղամարդ,
պետք ա կուսակցությունից չե, աշխարհքիցն ել
դեն զցես, յես հլամ եսպես եմ կարծում:

Ահա թե ինչ պիտի իմանայի յես, վորի հա-
մար մի քիչ քիթո կախեցի:

Նայում են Նարգոյին... Գեղջկուհի յե, խո-
կական գեղջկուհի, բայց կուսակցական ե ու
գիտակցություն ունի: Յերբեմն յերեխայի պես
մեղմ եր ու հանգիստ, յերբեմն ծալքեր եյին
առաջանում ճակատին: Մտազրադ նայում եր
գետնին:

Մենակ մի բան ինձ զայրացնում եր, մին-
չե չելի հարցնում, ինքը Նարգոն չեր խոսում:

Սկսում եյին յենթողբություններ անել,
վոր Նարգոն կամ չի սիրում մտերժանալ, կամ
ինձ չի վստահանում:

— Բնկեր Նարգո, դու ամուսնացած ես:

— Նոր եմ մարդ ուզել, —պատասխանեց
նու կարձ:

— Զե՞ վոր զյուղերում աղջիկները շուտ են
ամուսնանում, եղ ինչպես ա, վոր դու նոր
ես...—Զվերջացրի յես ու դոհ եյի, վոր խոսակ-
ցության ծայրը բացվում եր:

— Ուրեմն քո ասելն են ա, վոր յես շամար
եմ մեծ, կարող ա եղակես երեվա, դու մեղա-
վոր չես, իմ ապրուսան ա մեղավոր:

— Եու ջանել ես, շատ ջանել, բայց գյուղերում մինչև 16—17 տարեկան՝ մարդի դնացած են լինում։

— Թե վոր իմ զլխին ել մի պատահմունք չգար, յես ել թեզ մարդ կանեցի, վոնց վոր մեր գեղացի շատ աղջկերքը, —ասեց նա ժալտալով ու հանդիսաւ։

— Եղ ի՞նչ պատահմունք եր, Նարգն, յերեկի շատ ես տանջվել, ես մեր կանայք, մանավանդ գյուղի կանայք, այդպես են։ — Յես ուզում եյի այնպես խոսել, վոր Նարգոն տրամադրվեր յերկար խոսելու։

— Ուզում ես տանջանք ասա, ուզում ես ջանելություն ասա, կյանք եր, շատ ժամանակ ել չի վրայովը թռել, մոտիկ ո հա, շատ մոտիկ։ Յես ավելի հետաքրքրվեցի և ուզում եյի աղաղակել, խնդրել, վոր նա խոսեր եղ մոտիկ անցկացած որերից։

Արգեն մթնել եր, փոքրիկ ճրագը վառեցի. նա լուռ եր։

— Հիմա իսկի չեմ ցավում, համա են վախտը շատ ջանել եյի ու մտածողությունս՝ հում։ Բախտ եր, թե ինչ եր... Սկսեց նա։

Յես ապշած նայեցի նրա յերեսին ու վրաբերի։

Դու բախտին հավատամ մ ես։

— Համբերի, յես եղ բախտի հետ չեմ, բախտ

ուրիշ մտքով եմ ասում, այսինքն մեր ապրուս-
տը, մեր ջահելությունն ու մարդիկը՝ մարդի
համար բախտ են սարքում, դրան եմ յես բախտ
ասում։

Յես ինձ նախառեցի իմ անհամբերության
համար։

— Յես գեռ ոչովի իմ պատմությունն ա-
րած չեմ, իմ մարդին ել չեմ պատմել։ Մին են,
վոր դու կնիկարմատ ես, լավ կհասկանաս, մին
ել երեվում ո՞ դու մարդի սրտի մոտեցող ես,
դրա համար ուզում եմ պատմել։

Նա մեջքով հենվել եր պատին, իսկ յես թիկն
եյի տվել անկողնուս վրա ու տրամադրվել եյի
լսելու, միայն անհանգստանում եյի նրա համար,
վոր կարող եյին մեղ խանգարել։

— Են վախտը պուճուր եյի, շատ պուճուր,
13 տարեկան եյի, համա թեղ ել հասած աղջկա
տեսք եյի առնում։ Հիմի վոր տեսնում ես, են
վախտը՝ հինգ եսքան ջան ունեյի. ես կոներս
ըսնվում չեյին։ Ասա կերածդ ել լինչ եր, ցա-
մաք հաց, ընդուր վոր մենք շատ չունեվոր ե-
յինք։ Համա յես առողջ եյի ու յերեսիցս նուան
հատ եր կաթում, վոնց վոր մի պտտվող չարխ,
սաղ որը դինջություն չունեյի. բաց ողում, ա-
րեվի տակ, վորտեղից ասես, նարգոն եր ձեն
տալիս։ Իսկ մեր դեղացիքն ել, են վախտվա-
մաածմունքով, իմ անդինջության համար՝ «թո-

կից փախած» եյին կանչում,

Դե, վոր պուճուր եյի, խելքս ել խմոր եր՝
գեղ ու գեղականին լավ չեյի ճանաչում, աշխարհ-
քի բաները լավ չեյի հասկանում. հերս, վոր ու-
րիշի համար հունձ եր անում ու քիչ փող եր
ստանում, հենց զիտեյի թե աշխարհքի որենքն
ըտենց ա ու ըտենց ել կերթա, վոր մեջ հարե-
վանի աղջիկը վոտնամանով ու շալ շորերով պի-
տի ման գա, իսկ յես՝ բորիկ ու ծակծկված շո-
րերով:

Համա չմոռանամ ասել, վոր յես իմ պու-
ճուր տեղովը՝ մեկ. մեկ նեղանում եյի ու աշ-
խարհքի որենքը չեյի հավանում. Ելի մոռանում
եյի եդ նեղությունը, ձենս զցում եյի զլուխս
ու կտուրից կտուր թոշում:

Ես վոր ասում եմ, են արնակեր կոփիլսերի
խառը վախտերն եր.—Հորս կոփիվ քշեցին, մեա-
ցինը յես, մերս ու կույր նանիս (հորս մերը):
Մի հատ ել պեծիկ ճակատով կով ունեյինք, ա-
մեն որ տանում եյի արածացնելու. վոտքերս
բորիկ, հազիս շորերը քծքծված՝ վոչ ցուրտ գի-
տեյի, վոչ վախենալ, վոչ ել սովածություն.—
բանջարն ու սինզրիկը հերիք եր՝ ենքսն ու-
տում եյի: Մերս ուրիշի համար գործ եր անում,
յես ել եյի անում ու ապրում եյինք: Վոր ար-
տերը հնձում եյին ու տանում, յես ու մերս
գնում եյինք ընկնում հնձած տեղերն ու կենտ-

կենտ մնացած հասկերը հավաքում ու փեշերով
տուն բերում. նանս քոռեքոռ ձեռներումը տրո-
րում եր ու ցորենը թափում։ Նանս ծեր եր,
շատ ծեր, ընդուր վոր արդեն կուրացել եր. հա-
մա ինքն իրա տարիքը չեր իմանում։ Հարցնում
եյի, — նանի, քանի՞ տարեկան ես. ասում եր,—
հիսուն, իննասուն. յես փրթկում եյի, յես հաշ-
վել գիտեյի. — ախր նանի, հիսունը վորտեղ, ին-
նասունը վորտեղ, ասա հիսուն, վաթսուն։ Նանս
նեղանում եր ու ձեռն ընկած քարի կտորը
շպրտում քամակիցս. յես սիրում եյի նանիս չա-
րացնել.

Հոկտեմբերի Մեծ Հեղափոխությունը, այ-
սինքն բալշեիկական հեղափոխությունը, վոր
Ռուսաստանում յեղավ՝ մեր սաղ գեղն իմացավ,
յես ել իմացա, իմ նանն ել իմացավ։ Ասում
եյին, վոր ենտեղ կոխվ չկա ու խաղաղություն
ա, մենք ել ուրախացել եյինք ու ասում եյինք՝
հերս կովիցը կզա։ Համա մեզ մոտ, դեռ հեղա-
փոխությունը չկար, թուրք ու հայ իրար ջար-
դում եյին. իսկ Ռուսաստանումը հեղափոխու-
թյունն առաջ եր գնում, մենք իմանում եյինք։

Արև, աշխարհք, յես ել կենդան ջան. պուշ-
ճուր եյի, համա թաղա բաներով շատ եյին հե-
տաքրքրվում։ Յրեխանց համար եդ թափուր
խարարները՝ վոնց վոր հեքիաթ, նրա համար,
վոր ըտենց բաներ չեյինք տեսել, ուզում եյինք,

վոր եղ հեքիաթը մեր գեղումն ել ըլի ու մենք
տեսնենք։

Մեր գեղումը սովածություն եր ու աղքա-
տություն. իրար ձեռքից հացը փախցնում եյինք,
հացի վշրանքի համար իրար քիթ ու բերան
եյինք ջարդում։ Ելի երեխերն արսը են լինում.
վոր իմանում եյինք թե բոլշեիկները զալիս են՝
թոշում եյինք ու սովորած փորներիս զիլ յեր-
դում։

Բայլշեիկը զալիս ա,

Դռան տակին տալիս ա...

Յեզոր քյոխվեն փախչում ա,

Աշխարհքը կանաչում ա...

Զե, եղան չի, — մեջ եր ընկնում մի ուրիշ
յերեխա ու ինքը յերգում —

Բայլշեիկ ջան, բայլշեիկ,

Հորս կուլից յետ բեր,

Ինձ հաց տուր ու մի շապիկ...

Վրա յեր ընկնում մի ուրիշ յերեխա, խփում
եր այդ լզարիկ յերեխի դլխին ու ինքը գոռում.

— Կարմիր պոպոզ բայլշեիկ

Մենք չունենք հող՝

Ու գարու հատիկ —

Կարմիր պոպոզ բոլշեիկ...

Պետք ե իմանաս, վոր գեղի երեխերքն ա-
վելի շատ բան են իմանում, բան թե մեծերը,
ըստենց ա, գեղի երեխեն աչքաբաց ա:

Յերգում եյինք՝ բեզարում, հետո ել նըս-
տում պատի տակ, կամ թե չե մարտքի կողքին
ու դրույց անում.

— Տեսնես բալշեիկն ի՞նչ թավուր ա:
Յես ասում եյի.—

— Կարմիր պողեր ունի...

Մեկելը թե՝

— Կարմիր կատար ունի...

Զոռ եյինք տալիս զլխներիս ու հեքիաթի
պես յերկար խոսում:

Մին ել մեզանից մեծն ու ավելի հասկա-
ցողը բամփում ե զլխներիս.

— Գարի ուտողներ, ի՞նչ եք շատ դուրս
տալիս. նրանք ել մեզ պես մարդիկ են, մենակ
ուրիշ իշխանություն են:

Նա վոր եղ ասում եր, կոիվ եր ընկնում
մեր մեջ. յես խմանում եյի, վոր վերջում պետք
ա տուր ու դժփոց լինի, փախչում եյի մեր
տուն:

Եղ փիս ժամանակները, վոր հաց ել չեր
ճարվում ուտելու, մերս հիվանդացավ, տեղի
տակն ընկավ։ Նանիս աչքերն ել կուրացած,
բան չեր կարում անի. յես մնացի տան կառա-
վարողը։ Կովը տանում եյի արածացնում, կերա-
կուր եյի յեփում, բոլոր դործերը յես եյի ա-
նում։ Կովի կաթը խմացնում եյի մորս, յես ու
նանիս աթարի պես սև հաց եյինք կրծում։

իսկի չեմ մոռանում, վոնց վոր աչքիս առաջ, մեր հարևանի յերեխերքը՝ յերկու հատ իրար թայ, սովածության պատճառով հանգումը կանաչ եյին կերել,—թունավոր եր յեղել, յերկուսն ել մեռան, իսկի չեմ մոռանում, իրար հետ շատ եյինք խաղացել:

Մերս հիվանդ եր ու հիվանդ, չեր լավանում, մի որ ել սրառվ սինդրիկ ուզեց: Են սհամը վազեցի հանդն ու ճաշվանից մինչև իրիկուն դոդս լցրի, տուն եյի գալիս:

Աչքերս փակել եյի, ասում եյի մին, յերկուիրեք...—ըտենց խաղուով եյի գալիս, ենքան վոր դինջություն չունեյի:

Մեկը թեփիցս ձգեց, աչքերս բացեցի ու մտիկ արի, վոր հարուստ Ակորի աղեն եր, ինքը յեքա մարդ, բեխով, մորուքով, ցցվել եր իմ ճամքին: Մտիկ եմ անում աչքիս փիսն աթվում, նու ել ինձ եր մտիկ տալիս, վոնց վոր շունն արնոտ մսին:

Տեսնեմ դունչը մոտեցրեց, ասեցի մարդ ա, ով գիտի, բան ա տառւմ, այ, հիմի վոր հիշում եմ, ջանս սարսափոտում ա:

— Արի կանաչի տաժ տար, մորդ սիրաը կուզի,—ասեց նա ու տարավ իրենց բոստանը:

Յես ուրախացա, ասացի ի՞նչ լավ քեռիյա:

Տեսնեմ ձեռքերով տորորում ա դոշս, հետո քեխերը քսում ա յերեսիս... յես ել տառւմ եմ:

ինչիցն ա ինձ եսքան սիրում, ինչ զիտելի, երեխի, կնկա տեր մարդ եր, յես ել պուճուր աղջիկ եյի:

Վոր ուզեց փիս-փիս բաներ անել, խելքակտրուկ դառա. զոգս ըսնած եյի, բաց թողի, մորս սինդրիկը թափվեց... Դրա թեզն ընենց կծեցի, վոր թիւացավ ու յես մարգերը արորելով փախա:

Մինչե եդ որը, վոչնչից չեյի վախում, եդ որվանից մարդկանցից վախում եյի:

Տուն գնացի, քիչ ա մնում լաց լինեմ ու մորս, նանիս բան չեմ ասում և եղան ել չասեցի:

Մորս խափեցի, թե սաղ հանդը քանդեցի՞ սինդրիկ չկար, մերս տնքաց ու յերեսը շուռ տվեց, իսկի չեմ մոռանում:

Եդ որն ընկերներիս մոտ չգնացի խաղալու, մեր դռան տակին նստեցի ու սուս լաց եյի ըլում, մին սրտիս նեղությունից, փիս մարդի արարքի վրա, մին ել, վոր մորս սրտի ուզածն անկտտար մնաց:

Յես հո մեղավոր չեյի, մտքումս ասում եյի՝ «վոնց վոր ըլի եդ Ակոբի աղի զլխին մի ոյին կըերեմ»: Յես ասում եյի, հանաք չիմանսս ու պետք ա անեյի:

Են առավոտը մերս մեռավ. յես ու նանիս ենքան լավ ելանք, յես մտքումս ասում եյի.

«Վոր մայրիկս սինդրիկն ուտեր, կլավանար», դրա
համար վոնց վոր են մարդն եր մորս սպանել...

Մեր աղքատ գյուղացիներից յեկան, հորս
հավասար մարդիկ, իսկ Սոնայի հերը չեկավ-
մորս թաղեցին:

Դրանից հետո Սոնային շատ եյի ասում ու
ջրի գալիս նրա կուժը կոտրում եյի:

Եղ ժամանակներում մեր գեղումը մարդաս-
պանություն շատ եր լինում. վոր պակասու-
թյուն եր ու ապրելը չատ դժվար եր՝ մեծ ու
պստիկ իրաբ հետ թշնամություն եյին անում։
Տղեն մորը, քվորը տանից դուրս եր զցում։ Մեծ
գեղացիքն իրարից տավար եյին գողանում, իսկ
փոքր երեխերքը՝ հավ ու ճուտ։ Մեր Պեծիկին
պահապան եյի միշտ, բերում եյի իմ ու նանի
կողքին կապում։

Դաշնակցության մարդիկը աղջիկ եյին
փախցնում, ճամբա գնալը հեշտ չեր, թալան եր
լինում, սպանություն։

Ելի յես իմ ընկերներին ու խաղերը չեյի
մոռանում, ձեն եյի տալիս, ձեն եյի առնում։
թռչում եյինք գեղականների մեջ ու խարարներ
եյինք իմանում։ Մեր խաղի ժամանակ մեծերէ
ասածներն ել յետ ասում եյինք, իսկ մեծերը
հենց գիտեյին՝ իրենց իմացածները մենք չպի-
տենք։

Ել առաջվա միամիտը չեյինք, հլոմի յես եյի

հասկանում, ուրիշ երեխսերքն ել, վոր բայլշեիկ-ները գան՝ ուրիշ թափուր ենք տպրելու:

Չեմ մոռանում, պուճուր Պողոսն ասում եր՝

— Ով տասը հատ կոճի ունի, մենակ իրանը չի, պետք ա բոլոքիս համբարքով հավասար բաժանի, ու կոճի ունեցողն ու նա իրար հետ կովում եյին:

Յես ուրախանում եյի, վորովհետեւ մենակ մի կով ունեյինք, են ել մեզ կհասներ, դեռնանիս բաժին չկար:

Բոլորս չքավորի յերեխաներ եյինք. հարուստի յերեխաները չեյին խառնվում մեզ. առաջներում նրանք ել եյին մեզ հետ խաղում, բայց եդ ժամանակ ջոկնվել եյին:

Չեմ ուզում յերկարի, շատ բան կա ասելու, տեղն ու տեղն ինչ վոր միտս ա գալիս, են եմ ասում, չեմ ուզում յերկարի:

* *

*

Գյուղացիները դեսդեն խլրառում եյին ու ինչ վոր մի բանի սպասում, մենք ել հետները, Քայլշեիկության քալու որերն եյին: Հին կառավարությունն ինքը չկարողացավ կառավարի, փախչում եր:

Յես ասում եյի, — ախ, յերանի շուտ գան, հիմի արդեն դիտեյի, վոր նրանք իսկական մարդիկ են, մենակ աշխարհքի հին կարգերը փոխում են, են կարգերը, վոր յես մի բանի տարի ա-

ուաջ կարծում եյի մշտական են ու անփոփոխ, եղ ժամանակ արդեն յերկու տարեկանն ել զիտեր, վոր անփոփոխ չեն. յես աչքաբաց եյի, ավելի թեզ իմացա, դեռ նանիս ել պատմեցի, նա յեր դժար հասկանում: Բայց դեռ չեյի մտածում՝ նանս չհասկանար ել կլիներ, վորովհետեւ յես վոր կողմը լինեյի, նա ել իմ կողմը կլիներ, յես եյի նրա պաշտպանողը:

Խաբար ընկավ գեղը, թե գեղումը երկու հատ բալշեվիկներ են յեկել... Գեղացիք գնում եյին տեսնելու, մենք ել գնացինք:

— Դրանք մեր գեղի զինվոր գնացած տըղերքն եյին. շինելներ ունեյին հազներին ու յերեսները գեղնած, մազոտ. մենք յերեխեքս մոտենում եյինք նրանց: շինելներին ձեռք տալիս և ուզում հասկանալ, թե ի՞նչ ե բալշելիկը. ասում եյին, դրանք գեղացոց պատրաստում եյին. դե յես եղքան չեյի կարող հասկանալ:

Եղ ժամանակ, վոր մեծ ու պուճուր սպասում եյինք, Ակորի տղեն ինքը գաշնակցական եր. տանը պահ եր մտել, զենքը ձեռքին, վոր հետո բալշեիկ սպանի. վոր յես իմացա, են սհաթը գնացի իմաց տամ են շինելավոր զինվորականին: Մին ել տեսնեմ, վոր թագա իշխանությունը բարձրացել ա, ու առաջին մարդիկը, վոր յեկան ժողով արին, յես հենց նրանց կողքին եյի կանգնած: Նրանք մեզ հասկացըին, թե

ինչ տեսակ իշխանություն ա, հողի դեկրետի
մասին խոսեցին, խաղաղության դեկրետի մա-
սին խոսեցին: Են շինելավոր մեր գեղացի տը-
ղերքն ել խոսեցին ու խմացանք, վոր դրուստ
բալշեիկ եյին: Մտքումս պահում եյի ու իսկի
չմոռացա նրանց ասածները: Շինելավոր տղի
թեից քաշեցի ու հայտնեցի Ակորի տղի մասին:

— Այ ընկեր, նա դաշնակցական ա, զենք
ունի և ուզում ա բալշեիկ սպանի, համ ել աղ-
ջիկ ա փշացնում...

Զեր անցել մի քանի ժամ՝ տրաբոցներ լսե-
ցինք...

Փռվել եր Ակորի տղեն ու մի քանի ուրիշ
դաշնակցության մարդիկ. ել զրանից ավել
աշխարհքումը վո՞նց ուրախանայի:

Իսկի չեմ մոռանում եղ զինվորական բալշե-
ջիկ տղերանցը... Են ժամանակ նրանց հրացա-
նը մեծ գործ եր տեսնում: Նրանցից մեկը մե-
ռավ... ափսոս, շատ ափսոս, կռվող տղա յեր,
յես նրա կոներին մատաղ, նա փոեց Ակորի
տղին. Են մեկն ել ասում են հիմի Մուկվա յա:
Ինչքան ժողով ու միտինգ եր լինում. յես են-
տեղ եյի լինում, վոր նանիս կողքին նստեյի
Բնչ պիտի անեյի. նանս ինքն եր ասում, — զնա
խաբարներ իմացի ու ինձ պատմի:

Հերս չեկավ ու չեկավ, նանս շատ եր մըղ-
կտում. մի որ ել ինձ զրկեց, թե զնա եղ եկող-

հերից հարցրա, բալթի տեսած լինեն հորդ, բալթի տեղն խմանան:

Իմ խելքը զբանից բան չկտրեց, մտքումս ծիծաղեցի, ասացի. «Վարտեղից պիտի ճանաչեն հորս», չհարցրի. Նանիս խարեցի՝ թե չեն տեսել, գեռ ելի պիտի սպասենք: Ասում եմ, վորիս հերը յետ գար, նա ել բալշեիկ դարձած կլիներ:

Մենք յերեխեքս գիտեյինք, հենց վոր միտինգ եր լինում, դրոշակ ել պիտի լիներ: Մենք ել շատ եյինք սիրում եղ կարմիր, ֆրանսն դրոշակները. վազում եյինք, Խորհրդային իշխանության հետ մենք բոյ եյինք քաշել ու մեծացել, ել մանրունք չեյինք:

Մի անգամ մի մեծ մարդ եր դրոշակը բռնել, մոտեցա նրան, խնզրեցի վոր ինձ տար, յես պահեմ. նա մտիկ արեց աչքերիս, ծիծաղեց ու դրոշակը տվեց:

Աշխարհի յերեսին եղքան հպարտ չեյի յեղեւ ինչ եղ որը. իսկի ընկերներիս յերեսին չեյի ծիծաղում, լուրջ կանգնել եյի՝ դրոշակը բռնած ու լսում եյի խոսողներին: Ծնկերներս իրանքն ել ելին ուզում բռնել, համա գժվել եյի, ով կտար, հո խաղալիք չեր, իշխանության դրոշակ եր, չե՞:

Տուն յեկա նանիս պատմեցի, պատմեցի նանս ասում եր.

— Բա լի՞ չեյիր իսնդրում, վոր մենք յե-
թիմ ենք, մի նան ունիմ քոռ ա, ապրուստ
չունենք ու եզ մեծավորներն իրանք կողնեն:

Պատասխանում եյի.

— Նանի, մեծավոր չեն, ել յետ մեր գեղա-
ցիներիցն են, չքավորներիցն են. նանս նեղա-
նում եր ու գժար հասկանում:

Ասում եր —

— Ախր չքավորը կառավարող կլինի, դու-
յերեխա յես, հասկացել չես:

— Յես ել ինչ անեյի, աչքերը չեյին տես-
նում, վոր տանեյի աչքերովը տեսներ:

Ասում եր գնա, ցորեն ուղի...

Յես ել ստածում եյի, թէ վո՞նց կլի ըտենց
տաել, ու ինչքան վոր նանս բան եր ասում՝ ա-
կանջիս յետեն եյի զցում:

* * *

Առաջին անգամ, վոր կոմսոմոլը կազմվեց,
աղջիկ մենակ յես եյի գրվել, հետո կամաց-կո-
մաց ուրիշներն ել գրվեցին:

Են վախար գյուղացիք կոմսոմոլին ուրիշ
աչքով եյին մախել տալիս ու իրանց աղերանցը,
աղջիկներին չեյին թողնում կոմսոմոլ գրվեն:
Յես վոչ հեր ունեյի, վոչ պահող՝ յես իմ զլիսի
տերն եյի, իմ խելքովն եյի շարժվում: Հերս
չքավոր եր յեղել, յես ել չքավոր եյի, իսկ մեր
իշխանությունն ել չքավորությանն եր, յես ել

մեր իշխանության հետ ելի, վոնց վոր ուրիշ շատ գեղացիներ:

Յեվ ուրիշի համար աշխատանք ելի առ նում, թե չե ինչով պիտի ապրելինը և կոմսով ելի:

Ուրախ ելի, վոր Սոնիկի հերը շատ եր խեղճացել. յես ել Սոնիկին ըսենց վերեից ելի մտիկ տալիս ու վազում ժողովի, իսկ նա հենց միալար տանն եր նստում:

Կրծքներիս կամ կարմիր կառը, կամ կարմիր թուղթ ելինք կպցնում. կոմսով ելինք, հո հասարակ բան չէր, իշխանության ոգնական ելինք:

Մի քիչ լուրջացել ելի, յերեխանց քամակից չելի վազում, բայց ելի շատ յերեխություններ ունելի:

Մեր կոմսով տղերքը լավն ելին, բայց մի անգամ սիրած ահ եր ընկել, ենքան չելի մոտիկանում նրանց:

Հոտաղ Հովանն ինձանից հետո կոժամով ժրտավ. նա թաղա յեր ու մենք սաղ թաղա ելինք:

Ինչի՞ համար Հովանի անունը տվի, վորով հետեւ եստեղից իմ պատմությունը նբա հետ ակապվում:

Նարգոն մի փոքր հանգստացավ, յես լուս ելի, չելի ուղում վոչ մի շշուկով ընդհատել

պատմության կապը:—Նա շարունակեց.

Մի իրիկնապահին, մեծ վեգրոյից Պեծիկին ջրում եյի: Հյուսերս հավաքել եյի մի վարդագյուղ աղլուխի մեջ ու պոչն ել կախ եյի զցել. յես ինձ իսկի չեյի հավանում, ինչի՞նման եյի վոր... Զանս առողջ եր, յերեսս կարմիր, համա շարժմունքներս կոպիտ ելին ու հագուստեղենս մաշված:

Կովս մզզալով ջուրը ծծում եր, իսկ յես բորիկ վոաներս թփթփացնում եյի գեանին. վեգրոն ել կովի դնչի տակ դուզ չեյի բռնում, փախցնում եյի ու ելի մոտեցնում դնչին, ենքան վոր անդինջ եյի:

Յես պեծիկին շտա յեի սիրում, նրա համար, վոր մորս կովն եր, համ մեղ կաթ եր տալիս, համ ել ճակատը պեծիկ սիրուն եր: Նրա հետ խաղում եյի, հանաքներ անում:

—Պեծիկ ջան, անկուշտ ջան, ենքան խմի, փորդ տողի, —ասում եյի ու նրա պես շրթուքներս չպչպացնում:

Մեկ ել վեգրոն տովից լցրի ու բերեցի, կովի դնչի տակ բռնեցի. Պեծիկն ել չեր ծծում, կշտացել եր ու դունչը քսուժ ձեռներիս. յես ենքան եյի ուրախանում, իմ պատկերը տեսնում եյի Պեծիկի աչքերի մեջ, լեզուս եյի հանում, լեզուս եր յերեսում, խակական հայելի յեր Պեծիկի աչքերը:

Հանկարծ մինը կպավ քամակիս, — յես մտածեցի՝ «սա շնություն ա, սա փիս բան ա» ու յետդարձա վեզրոյով ջուրը շուռ տվի գլխին. ինձինչ, ով ուզումա լիներ, վեզրոն ցած զրեցի ու փախա, հարեանի դարմանի մարագը մտա:

Դուն ճեղքից մտիկ եմ տալիս, տեսնեմ Հովանն ա, վոչխարները կանգնել են, ինըը թրջված դես ու դեն ա պատվում. յես ծիծառում եմ: Փափախը թափ տվեց, հերսիցը վերցրեց վեզրոն ու կովիս մեջքին խփում ա, կովը բառաչում եր. վոնց վոր մերս լիներ կանչելիս, սիրաս չղիմացավ. դարմանի մեջ յեղան կար, վերցրի ու դուրս յեկտ, կամաց քամակի կողմից հասա, թիկունքին մին, յերկու յեղանով դադեցի, ել յետ յեղանը զցեցի ու փախա:

Հիմի յեմ իմանում, իմ արածն ել մի բան չեր, ի՞նչ անեմ, են ժամանակվա հասկացողությունս ու բնավորությունս այնպես եր: Հովանն ել եր ջահել, յես ել...

Զիմացա վոնց հավաքվեցին, ի՞նչ խոսեցին զեղացիք ու Հովանն ի՞նչ աչքով պիտի նայեր ինձ:

Թփթփացնելով տուն ընկա, նաևս վերթռավ, նա շատ լավ լսում եր:

— Նարզմ, աղջի եղ դժւ յես, — բղավեց, — աղջի, ել յետ ժւմ կուժն ես կոտրել, խի յես հեթեթում:

— Զե, նանի, արխային կաց, Պեծիկին ջուր
եյի խմացնում...

— Կերավ, լավ կերավ, դե թող գնա, թըրջ-
ված մուկ դառնա, — ասում եյի բարձրածայն,
մոռանալով, վոր նանս լսում եր:

Աղջի Նարզան, եղ ում հետ ես խոսում, —
ասում եր նանս, պատերը բռնելով:

— Թող իմանա, Նարզան իրան ասածներից
չի, շատ ել թե կոմսոմոլ ենք, թող իրա հալին
մնա...

Նանս յերեսը կծիկի ոլես դարձրեց.

— Աման, աղջի ջան, քեզ հետ մի բան ա
պատահել, լսերս դուրս յեկածին խի՞ յես մոր-
թում, — մզկտաց նա:

Խեղճս յեկավ, մի ուրիշ բան հնարեցի,
վոր նրան հանգստացնեմ:

— Նանի ջան, Առնեն ինձ ասում եր յեթիմ
ես մնացել հորից — մորից ույեթիմների կոմսոմոլ
ես դառել: Յես մի լավ ջուզաբ տվի, լաց լինելով
գնաց:

— Վայ, գետինը մանեն դըանք, իրանք ել
յեթիմ մնան, ինձ պես պատե պատ կպչեն..

Նանս ուրիշ զենք չուներ, անեծքներով եր
սիրտը հովացնում. սկսեց մըմնջալով լաց լինել:
Յես կարծում եյի, թե կղինջանա: Մարիկ եյի
տալիս նանիս աչքերին ու չեյի խմանում, թե
վո՞նց եր լաց լինում, մենակ յերեսը փոքրանում

եր ու կծիկի պես դառնում:

Տեղս մտա. նանիս ծոցին եյի քնում. համա քունս չեր տանում. մեկ ծիծաղս եր պըրծնում թրջված Հովանի վրա, մեկ ել նեղանում եյի, շատ եյի նեղանում, թե ինձ վրա, թե նրա վրա:

Դրուստ վոր յերեխա եյի. մի քանի ժամանակ կոմսոմոլի ժողովսերին չեյի գնում, խոռվել եյի Հովանից ու նրանցից:

Իրա թրջվելու մասին Հովանը վոչ վոքի չեր ասել, իսկ յես հենց գիտեյի ամենքին ասել ա: Թե Հովանը հանաք եր արել, յես՝ լուրջ և ուրիշ բան եյի հասկացել:

Մի որ ել միտք արեցի ու մի լավ ծիծաղեցի՝ թե Հովանից եմ խոռվ, հո կոմսոմոլից ել չեմ խոռվ ու զնացի ժողովի:

Պետքա ասեմ, վոր կոմսոմոլներս գեղի համար գործ եյինք անում:

Մի որ ելի հավաքվեցինք բահերով, քլունգներով—մի մեծ արխ պիտի փորեյինք:

Բղավելով, յերգելով, դրոշակներով զնացինք: Շատ յեռանդուս եյինք, յես տղերանցից հետ չեյի մնում, ենքան ուժով եյի, մեկ քլուզով եյի քանդում, մեկ ել բահով հողը դուրս եյի տալիս. Ե, մի յերկար շարքով եղպես աշխատում եյինք. վորը բեղարում եր, նստում, վորն ել մեկնվել եր՝ քնում, յես ծիծաղում

եյի ու բարկացնում.

—Թամբալ, թիլ կոմսոմոլ, ամռթ ամռթ:

Մի կոմսոմոլից են կողմը Հովանն եր քանդում. նա ել իսկի չբեղարեց: Շուտ-շուտ կոանում եր ու ծիծաղելով ինձ մտիկ տալիս, յես ել եյի կոանում, մտիկ եյի տալիս, բայց ինեթում. նա ծիծաղում եր՝ սիրտը լավ, յես ինեթում եյի՝ սիրտս չար... նա մոռացել եր, յես չեյի մոռացել. եղանակ եր յերեվում: Վոր տուն եյինը գնում՝ իմ բանն ուզեց ինքը վերցնել, յես բրթեցի նրան ու առաջ ընկա:

Հիմի յեմ զարմանում—ինչի՞ եյի ենակես. նա կոմսոմոլ եր, յես ել կոմսոմոլ եյի, նա աշխատանք անող եր, յես ել եյի անող, դեռ մի բան նա ինձանից ավել եր, վոր վատությունը մտքում չեր պահում:

Յես չեյի իմանում, Հովանն ինձ շատ եր սիրում, վոր քնում եր կամ վեր կենում՝ յես եյի սիրտը գալիս:

Են ժամանակ իսկի չեյի իմանում, թե սիրելն ի՞նչ թափուր բան ա: Քանի՞ անգամ Հովանը ճամբին պատահել տ ինձ, սազերիցս տ ձիգ աըվել, խնդրել՝ արի քեզ բան եմ ասում: Յես իմ ասածի եյի, են սահաթը փախչում եյի: Շատ վոր զոռեր, ինձանում շատ չկար, ումի՞ց եյի վախում, քթին կտայի:

Ինքն ուժով տղա յեր, վոր ուզենար՝ ինձ
կհաղթեր, բայց չեր ուզում, ձենը կտրած գնում
եր:

Մի որ աչքովս ընկավ շեմքից, Հովանի մերը
նանիս կողքին նստած եր: Ներս չգնացի, դուան
քամակին պատրաստվեցի ու տկանջ եմ զրել:

Հովանի մերը՝ սիրալ բարի, խեղճ կնիկ եր:
յերեսը վոնց վոր պուճուր կուլիկի յերես:

—Այ հոքիր (նանիս հոքիր եր ասում), հեր-
րիք չի, բու թոռն իմ տղին վառեց,—ասում եր,
ձեռքը քսում նանիս ծնկին,—հիմի յել հո են
հին վախտերքը չի, վոր Ասլի-Քյարամի պատ-
մությունը դառնա. հիմիկա ջահելությունն եղ
անում չի, եսոր սիրեց, եզուց պետքամ իրար
ուզեն: Եղան ել լավ ա, բա ի՞նչ, թե չե, մեր
ժամանակներում տղա ու աղջիկ մոմի պես հալ-
վում եյին: Նարգոն հասած աղջիկ ա, մարգի
գնալու ժամանակն ա, տուր իմ Հովանին: Թե
ասեմ դուք հարուստ եք, մենք աղքատ՝ ըտենց
չի. ինչքան դուք ունեք, ենքան ել մենք ունենք:
Իմ Հովանը դաթի կոմսումոլ ա, պատիվ ունի,
աշխարհի յետնյալը չի, վոր ասեմ հա, զոռով
պիտի աղջիկ ճարենք:

—Իշխանավոր ա, —հարցըեց նանս:

Հովանի մայլը ծանը ու բարակնանիս խոս-
քը կտրեց.

—Առաջավոր ա, ելի, վոնց վոր ես թա-

վուր կարգերումը պետք ա լինեն, իմ Հովանն
ել սրանց զաղափարովն ա զնում։ Դուզ ա,
հոտաղ ա, համա վոր հիմի դրանց պատիվն ա
շատ։ ՅԵս ի՞նչ անեմ, դու ինչ անես, աշխար-
քի բան ա, հիմա յել թող մեր յերեխսիքն ու-
րախանան։

—Նանս նոր կարգերից քիչ եր հասկա-
նում, ինչքան ել վոր զիտեր՝ յես եյի
պատմել. իսկ Հովանի մայրը ջահել եր ու աչ-
քաբաց։

—Համա, —յերկարացրեց նանս ու մտա-
ծում եր, —հալրաթ ըտենց ա, ելի, վոր ասում
ես։ ՅԵս ի՞նչ անեմ, թե Նարգոն կուզի, թող
առնի. իր աչքը գիտի ու իրա սիրու։

—Նանի, նանի, դու լավն ես, քեզ շատ եմ
սիրում, —վսփառում եյի յես դռան հետեից.
Նրանք չեյին լսում, ՅԵՐԵ նա այսպես ասեց,
յես ուզում եյի նրա կույր աչքերը լիզել։

Նա շերունակեց.

—Հա, ես պետք ա խմանաք, վոր ինձ պա-
հողն ըսոր-ըսոր Նարգոն ա, թե վոր մերժի,
վայ թե շատն իմ խաթեր մերժի։

Նանիս վերջին խոսքերից քիչ եր մնում
լաց լինեյի, ու չհամբերեցի, ներս մտա, վորպես
Հովանի մորիցը նեղացած՝ յերեսս շուռ տիկ ու
կանգնեցի։

Հովանի մայրը, յերբ ինձ տեսավ, ուրա-

խացավ:

— Աղջի ջան, Նարդիկ ջան, մի բանից ելա
յես չես ընկնի, յես ամեն դուծը կանեմ, դուք
ձեր քեփովը կերթաք...արի դու Հովանին ուզի:

— Հա, բարով ես յեկել, քու Հովանին ու-
զեմ, են անամոթին, վոր ճամբեն դուզ չի
գնում, խալիսի աղջիկներին ա ձեռք դցում,—
պատասխանեցի յես կոշտ ու կոսկիտ: Հիմի յեմ
խմանում:

— Աղջի ջան, ջահելություն ա, ընկերու-
թյուն ա, դու հո պակաս չես մնում:

— Ինչի՞ պիտի պակաս մնամ, — վրա տվի
կատաղած:

Նա շարունակեց. —

— Յես զարմանում եմ, դուք մի թափուր
տեղ եք գնում, իրար հետ ժողովք եք նստում
ու իրար հասկանում չեք: Հովանը վոր պիտ
աղա ըլեր, կոմսոմոլ չեր դառնալ:

— Պահ, մեծ բան ա, — տնագ արի յես ու
քիթս տնկեցի, — հենց զիտես ես իշխանությու-
նը մենակ Հովանինն ա, նրա զլուխը զիտենա:

Կծու-կծու խոսքեր շպրտեցի. մնաց սուս՝
տեղում նստած:

Ինչպես յերկում եր՝ նանիս համբերու-
թյունը հատավ, վրես բղավեց.

— Աղջի նարգն, ծակծկվես դու, աղջիկ ես,
ձենդ մի քիչ ցածն արա, մի ասիլ թե նանիս

աշքերը քոռ են, հո քառ ել չեմ: Իմանում եմ,
թե ի՞նչ թափուր ես ես կնկա հետ խոսում:

Նանիս խոսքերն ինձ վրա աղդեցին. ախր
իսկի յես ինձ հաշիվ չեյի տալիս: Փաթաթվե-
ցի նրա վզովը:

— Նանի ջան, մի նեղանա, լավ, արի բա-
րիշնք...

Հովանի մերը ձեռքը բսում եր գլխիս:

— Նարգիզ ջան, իմ տղի սիրաը մի կո-
տրի..., — նա կարծում եր, վոր յես համաձայն-
վում եմ:

— Բա իմ նանին ով պահի, — հանկարծ բղա-
վեցի յես:

— Հովանը կպահի, նանդ հարյուր տարի
հո չի՞ ապրելու...

Իմ սրտին եղ խոսքերը կպան, հիշում եմ
ինչպես եսոր, շրթունքներս դողացին, ասացի.

— Իմ նանին յես կպահեմ, յես մարդ չեմ
ուզում:

— Նարգիզ ջան, ինչի՞ առնվեցիր, ի՞նչ ա-
սեցի վոր, թե յես, թե նանդ շատ չենք ապրե-
լու, մենք անցկացած ենք:

— Զե, — պատասխանեցի յես:

Ցերեում եր, վոր նանս համաձայն եր,
շիտակ չեր ասում, բայց կողմնակի համոզում
եր:

Հովանի մայրը ծնոտը մոտեցրեց ականջիս

ու շարունակեց աղեկառւը.

—Մենք ել ձեզ պես յեթիմ ենք. քու հերն ել մի ժամանակ ուրիշի տավարն եր արածացնում. Համա վոր աշխարհի չարխը պատավեց, եղ թավուր մարդիկը կանգնեցին զլսին. ինչի՞ համար եմ ասում, վոր հիմի իմ Հովանն ել ջերկաքնկավ, դու վոր բախտ չունեցար, քու հերը սազմեար:

Դուզն ասած՝ նեղանում եյի, վոր նա իրա աղի մասին շատ եր խոսում, մեկ ել եղ հին կնանոց բնավորությունն ա եղակես, ինչ պատահում ա, իրար պոչից են կապում ու յերկար զըռոյց սկսում:

—Կրակի գար քու մերը, ինչքան սիրուն եր ու նամուսով կնիկարմատ, համա ի՞նչ անենք, վոր խեղճն որ ու արև չտեսավ:

Նանիս ել բան եր հարկավոր, յերեսը կծիկ-կծիկ բերելով՝ սկսեց—

—Են, են կռիվ իջաթ զցողները բարքի գետնին դիպչին ու միալար բառաչեն, վոնց վոր ես ժողովրդին բառաչացրին. Իրար յախից ձավար են հավաքում, մեր յերեխանցը թուր ու թվանքի դեմ անում, բալքի...

Ասում եմ, հին կնանիքը սիրում են տխուր բաներից խոսել ու վաշ-վիշը զցել: Եղ խոսակցությունից, շատ տխրեցի:

—Լավ, սուս կացեք, ըտենց բաներից միք

խոսի. վոր իս մերը կենդանի լիներ...

Բուկս լցվեց:

Մտիկ եմ տալիս նրանց յերեսին, կարծեա
մեռել կա առաջներին դրված, ընենց են արոր-
վում:

Յես վոր յերկար տխրել իմանայի, հիմի
վաղուց մեռած կլինեյի. միտս մի ուրիշ ծիծա-
ղելի բան եր ընկնում և մոռանում եյի արխ-
րությունը:

Ելի մտիկ տվի նանիս ու Հովանի մոր յե-
րեսին, նրանք պետքուշկաների նսան յերեացին
(պետքուշկա մեր զյուղը բերել եյին). ծիծաղս
պըծավ, ասեցի,—գնում եմ,—և դուրս յեկա մի
կուշտ ծիծաղեցի:

Գնացի Պեծիկին ջրեցի, մի յերկու կուժ
ել ջուր բերի, Հովանի մերը նոր մեր տանից
կտկտալով գնում եր: Յես ծիծաղում եյի, վոնց
վոր թշնամու վրա:

Հիմի մենակ յես ու դու յենք. յես քեզ
գրուստն ասեմ, են ժամանակ ըսենց եյի մտա-
ծում—«տղամարդը շուն ա»: Միտս եր ընկնում
Ակորի տղեն, նրա փիս աչքերը, փիս վարմուն-
քը... Բալքի դու յել իմանաս, աղջկա թե կնկա
համար եղ թափուր զոռով բանից փիս, ոքվար
բան չկա աշխարհում, ու դրա համար ել եղ
ժամանակ ըտենց եյի մտածում: Հին մտած-
մունք եր, վատ մտածմունք եր, չպիտեմ, հլամ

Նոր, նոր ենք սկսել թե կնիկ, թե տղամարդ իրաբ
չավ ճանաչել:

Ուզում ես գու յել ինձ մեղավորացու, յես
անցկացածն եմ ասում, չանցկացածն ի՞նչ ա-
սեմ...

Նարգոն լոել եր. յես չեյի իմացել, հան-
կարծ զլուխս բարձրացրի՝ ուրիշ գեղջկուհիներ
եյին յեկել սենյակս, Նարգոն նրանց հետ եր
զրուցում այժմ:

Յես շշմած եյի, նայում եյի նրանց վրա:
Նարգոն խառնվել եր ու վոնց վոր նրանց մի
կտորը՝ յես չեյի տարբերում նրան:

«Յերբ Նարգոն պատմում եր՝ ուրիշ եր,
այժմ ուրիշ», — մտածում եյի յես և ափառացի,
վոր ընդհատեցին պատմությունը:

Ուշ եր, յես չեյի իմացել, յերբ Նարգոն
գնում եր՝ յես հարցըի —

— Մեկ ել յերբ կշարունակես, ընկեր Նար-
գոն:

— Մի ուրիշ անգամ, ի՞նչ ես վոազում, —
պատասխանեց նա ու գեղջկուհիների հետ միա-
սին գնաց:

Յես շատ անհամբեր եյի, տիրեցի հենց
նրա համար, վոր պատմությունը կիսատ մնաց:

Նայում եյի պատերի նկարներին, վորոնք
ինձ ընկերակցում ելին մենակ ժամանակ:
«Նման ե սա մյուս գեղջկուհիներին. իհարկե

Նման ե», — պատասխանում եմ ինձ ու նորից
նայում նկարին:

* * *

Գեղջկուհիներին պատգամավորական ժողով-
ներին նախաղատրաստելու աշխատանքներով
ելի զբաղված:

Մանավանդ այս տարի, յերբ միջազգային
ընդհանուր դրությունից յելնելով՝ մեր կուսակ-
ցությունը լողունգներ ու հրահանդներ ե տալիս
մեզ — սոցիալիստական շինարարության արա-
գացում, յերկրի պաշտողանությունը և միևնույն
ժամանակ ռազմականացում — ուրեմն նույնպես
մեր կին պատգամավորական ժողովները պակաս
անելիքներ չունեն այս ասպարիզում։ Դրա պատ-
ճառով հատկապես յես շատ եյի զբաղված ու
մտահոգված։

Շրջում եյի գյուղերը։ Բավական ծանո-
թացել եյի իմ աշխատանքներին և գեղջկուհի-
ների ոգեբանությունը հասկանում եյի։ Այժմ
ավելի պարզ եյի խոսում, նրանց հարցերին սո-
վորել եյի ու ամեն տեղ կարողանում եյի յեր-
կար զրուցել նրանց հետ։ Առաջներում հուսա-
հատվում եյի, հենց նրա համար, վոր նրանց
չեյի ճանաչում, նայում եյի տնակների շեմքից,
իսկ այժմ դնում եյի տնակները։

Հավատացնում եմ ձեզ, նրանց մեջ կային
շատ գործնական գեղջկուհիներ և յես ճարում

Եյի նրանց:

Այժմ գյուղերից վերադառնում եյի հոգնած, բայց սրտապնդված. այժմ ինձ հետ քերում եյի նոր ու նոր առաջարեղ յեկող գեղջելուհիներից հիշողություններ:

Նարգոն ինձ շատ ոգնեց պատգամավորական ժողովներն անցկացնելու ընթացքում։ Հատկապես այդ գյուղում նա ճանաչում եր բոլոր գեղջկուհիներին, գիտեր՝ ում պիտի ընտրել, վորին համոզելով բերում եր ժողովի, ակտիվներից, չըավորներից, բատրակներից առաջ եյինք քաշում ու նախապես կազմակերպում։ Մեզ ոգնում եյին նույնպես կուսակցական և կոմսոմոլի բջիջները։

Ինքը, նարգոն, խոսեց պատգամավորական ժողովում.

— Վոր ձեզ ընտրում ենք, դուք պետք աձեռքներդ չծալեք ու նստեք։ Կոռպերատիվն ա, պետք ա կոռպերատիվի անդամ դառնաք, հալածի լավ ել պակաս կողմերն ասեք, խորհրդի մեջ եր ընտրվում, են աղամարդկանցը բարեբար պետք ա խոսաք ու գործ անեք։ Այ, Ծաղիկը, Զարթունը։ Ի՞նչ պակաս աշխատեցին, վոր հիմի յել իրանք, գեղացիքն են ուզում ընտրել նրանց։ Մեր գեմ թշնամիքը կոխվ են պատրաստում, մենք համ չենք ուզում, համ ել պտի պատրաստվենք։ Մենք կուժովանանք ավելի, լե-

թե բանվոր կնկա պես՝ գեղացի կնիկը շինարարությանը մասնակցի:

Գեղջկուհիները՝ վզները յերկարացրած՝
լսում եյին Նարդոյին.

Մի գեղջկուհի ձայն խնդրեց—

—Յես լսելով ընկեր Նարդոյին ու ընկեր
Աշխենին, առաջարկում եմ—մենք ունենանք մի
բաժին, վոր միքիչ ֆելշերական բաներ սովորենք...

Բոլորը ծափահարեցին:

Մի ուրիշը վեր կացավ.

—Յես ել ուրիշ առաջարկ եմ անում. մեզ
սովորեցնեն հրացանից կրակել, ընդուր վոր
մենք ավելի ուժով ենք ու քաղաքի կանանցից
դհա լավ հրացան կրոնենք:

Ծափահարում եյինք և ծիծաղում:

—Հիմիկվանից մենք ուզում ենք գրվենք,
ձայն տվին ամեն կողմից:

—Տեսնո՞ւմ ես, Աշխեն, տեսնո՞ւմ ես,—ա-
սում եր ինձ Նարդոն, վոր հստած եր իմ կող-
քին:

—Հիմի իմացալը, վոր գեղի կնանիքն ել
շատ բան կարան անեն,—շարունակեց նա:

Յես լուռ ժպտում եյի:

*

Արդեն լրանում եր մի տարին, ինչ վոր
թողել եյի քաղաքն ու աշխատում եյի շրջա-
նում: Աշնանը յեկել եյի, այժմ ելի աշուն եր-

Յերեկոները շատ ցուըտ եթ լինում։ Պետք ե
խոստովանեմ, վոր բավական քայլայվել եր ա-
ռողջությունս, այժմ չեյի կարողանում հաճախ
գյուղերը գնալ, շուտ-շուտ հիվանդանում եյի։
Յես չեյի ուզում այդպես լիներ, բայց ինչ ա-
նեմ. պետք ե ասել, վոր գյուղի աշխատողների
վիճակն այնքան լավ չե, մանավանդ կին աշխա-
տողների վրա շատ ե անդրադառնում այդ աշ-
խատոնքը. յես իմ փորձից եմ ասում. փոխա-
դրական միջոցներ չեն լինում, հաճախ վոտքով
ենք գնում, և այդպես, կին աշխատողները յեր-
կար չեն դիմանում, նույնն ել պատահեց ինձ
հետ։

Սակայն մի բան չեյի մոռանում, վոր նար-
գոն իր պատմությունը կիսատ թողեց. յես նը-
րան մի քանի անգամ խնդրել եյի, նա ժամա-
նակ չուներ, այդպես ձգձգվում եր։

Ասում եմ աշուն եր և ցուըտ իրիկուն.
յես արդեն վառարան եյի վառում. պառկել եյի
անկողնունս վրա. զլուխս ցավում եր։

Յեկավ նարգոն, իմ ընկերուհին և մոտիկ
քարեկամը. յես ուրախացա, կարծես զլխիս
ցավն անցավ, վեր թռա ու նրան տեղ արեցի
իմ կողքին։

Մենք այնքան եյինք մոտեցել, վոր եւ
ընկեր չեյինք ասում, այլ ուղղակի իրար անու-
ներով եյինք կանչում։

Նարգո, ինչ լավ արիք, վոր յեկար, թե չե
գլխիս ցավից մեռնում եյի:

Նա ծիծաղեց:

— Ուր ե թե մեռնում ես, ինձանից ել
դոչաղ ես խոսում...

— Զե, եղալես մի նայի, — ասեցի յես ու
գլուխս դրի բարձին:

— Նարգո ջան, ինչ կլինի են պատմու-
թյունը շարունակես:

— Պատմեմ, վերջանա, բայց վախում եմ
գլուխդ ավելի ցավի:

— Զե, այ, ցավը անցնում է, — ասեցի յես ու
նա ժպտալով սկսեց:

— Ենտեղ կանգնեցինք չե՞, ասեցի, վոր
Հովհանն ինձ շատ եր սիրում, յես ել բանի
գնում, սիրունանում եյի. ինչքան ուրիշի հա-
մար գործ եյի անում, ջանիս վրա ջան եր ա-
վելանում:

Ես թաղա գարունքվա զլուխն եր. իրիկ-
նապահին Պեծիկին հանգիցը տուն եյի քշում:

Վոչ փուշ եյի հարցնում, վոչ քար, վստ-
քորիկ գալիս եյի: Դիմացի սարերը քանի գնում,
մթանում եյին ու յերկնքին խառնվում. մտիկ
եմ տալիս կովիս, գույնը փոխում ա, ընդուր
վոր մթնում եր:

Առանց յերգի վոչ ճամբա եյի գնում, վոչ
ել գործ եյի անում, սկսեցի յերգել իւ հնարած

յերզը Պեծիկի մասին:

— Առու... — շվացը ին. ուշը չդարձրի, ելի
յերդում եմ:

— Աս... սա... սա... — շվոցները շատացան.
սիրաս մի քիչ թփթփաց, համա յես ինձ չկորց-
րի. մինչե շուռ յեկա, չորս կողմու յերեք հոգի
մեր գեղի հոտաղներից՝ ճամբես կապեցին:

Յես ել կանգնեցի, Պեծիկն ել: Եդ տղերըն
ել կոպիտ-կոպիտ, հենց ըսենց ասեցին.—

— Նարգի, դու պետք ա Հովանին ուզես,
պետք ա Հովանին սիրես:

Մտքումս ասեցի. «Ես Հովանի սարքածն
ա», — ու վանց եմ կատաղում:

Լեզուս հանեցի ու ծիծաղում եմ.

— Եյ, խելքներդ ում վրա յա գնում. զոր-
քաներ, ես վոր վախտն ա, ճամբա յեք կտրում,
աղջիկ եք տեսել: — Զեռքս զրել եյի մեջքիս,
զրուստ վոր վախում չեյի:

— Կովիդ փորը կթափինք, — ասեցին նրանք
ու հենց դուզ աչքերիս են մտիկ տալիս. յես ել
իրանց եմ մտիկ տալիս:

Հիմի մտածում եմ. «Սրանք Հովանի ընկեր
տղերքն են, Հովանն ա խրատել, բա ինքն ուր
ա». դու մի ասիլ, ինքը մի դրադ տեղ կանգ-
նած ա, դրանք խռոքը մեկ են արել:

Քրանք վոր ըտենց զորբա մտիկ են տալիս
աչքերիս, իմ արունն ել յեփվում ա:

— Ես վոր իշխանությունն ա, — բղավեցի յես,
— Մեր իշխանությունն ա, — պատասխա-
նեցին նրանք:

Եդ բոպեյին մտածում եմ. «Վանց թե ի-
րանցն ա մենակ»:

— Ե՛, նախիր քշողներ, Լենինը մենակ ձեզ
համար ա դրել. —ու չեմ ասում թե ինչ, —
իմն ելա, յես ել ձեն ունեմ, —ասեցի ու քիթս
բարձրացրի:

Իշխանությունը թագա, մենք ել ջահելներ՝
հւամ հում եյինք. եղ հոտաղներն ել իրանք
կոմսոմոլ չեյին, համա յերես առած եյին. Թե
մի բան գիտեյին, բղավում եյին, թե չգիտեյին
ել՝ բղավում եյին. Ելի ասում եմ, դրանց մեջ
չովանը կարդին տղա յեր:

Նրանք ինձ ճաքացնելու համար բղավում
եյին.

— Քեզ ձեն չունես, ձեն չունես, աղջիկ
ես,

— Դե յեկեք գնանք հարցնենք, ու հան-
կարծ ասեցի, — յես կոմսոմոլ եմ...

Եսպես լեզվակոիլ եյինք տալիս. Նրանց
վոչխարները կանգնած եյին. իս Պեծիկն ել
խեղճացել եր:

Նրանցից մեկը, վոր շատ յերեսված եր,
ուղեց կովկաս փորին քացով խփել, իսկ Պեծիկը
ծանրած եր: Են սհաթը մտքովս կայծակի պես

անցկացավ, ասեցի.

— Համաձայն եմ, հանաք եյի անում, այ, թող ձեզանից մինը կովիս տանի մեր գուռը հասցնի, յես մի քիչ կմտածեմ, մի քիչ ձեզ հետ կխոսեմ...

Են բոպեյին շվացրին, Հովանը յեկավ, ծիծաղելով, իրեն համար հանգիստ, կասես եղ բոլոր հանաք եր: Համա յեռ մտքումս տամամ եմ ցույց տալիս նրան:

— Այ, Հովան, դու կովին քշի ու ելի կդաս, մենք եստեղ ենք, Նարդոյի հետ,—ասեցին ընկերներն ուրախացած:

Համբերեցի մինչև Պեծիկին տարավ ու չեր յերեսում, դրանց ասեցի.

— Եկեք մոտիկ, ականջներիդ ասեմ:

Դրանք մոտեցան, միամիտ ծիծաղելով:

Ուժս հավաքեցի, դմբուզ արի ու դրանց քթին, ոեխին հասցրի:

— Այ ձեզ, դե գնացեք, զորքա ինամախոսներ...—արանքները ճղեցի, վոչխարների միջովը փախա, վոչխարներն ու նրանք խառնվեցին իրար:

Վո՞նց եմ վազում, մութն եր, նրանք ել չեյին կարա վոչխարները թոկնել. իմ բախտիցն եր...

Ենտեղ հաստ, վոր Հովանը Պեծիկին կապել եր ու յետ եր գալիս:

Հենց գիտեր Նարգոյին ուղեց, պրծավ, չեր
խտանում, վոր ընկերներին ջարդել եմ:

Ասեցի.

— Դե զնա, կոմսոմոլ գյաղա, զնա խնա-
մախոսներիդ կուշար...

Նա շիվարեց ու յետ դարձավ եսպես ասեց.

— Արես վկա, դու շատ փիսություններ ես
անում, համա յես համբերում եմ, մի ասիլ թե
չի կարա... աշխարհքի յերեսին մինակ դու չես,
արես վկա, կարում քեզ վատություն անել:

Եղանեղ խեղճացա, ձենս վորս ընկավ, ա-
սեցի.

— Ի՞նչի՞ յես ինձ զոռով...

Նա չթողեց, վոր յես վերջացնեմ.—

— Ի՞նչ զոռել, ախալեր, զիտեմ վոր դու
ինձ սիրում ես...

Ըսենց թազա բան ասեց, վոր յես շշմեցի.
Հիմի չգիտեմ, նրան հավատամ, թե ինձ:

Ելի ասեց.

— Կոմսոմոլը վկա, դու ինձ սիրում ես...
Գնաց:

Յես կամաց-կամաց տուն մտա:

Հիմի յեմ ասում. վոր Հովանը չլիներ, նրա
ընկերներն ինձ կզգելին, համա նա չեր թողել.
Հովանը լավի, եր քան յես...

Գիշերը տեղս եմ մտել ու ինքս ինձ միտք
եմ անում. «Ախը ես Հովանը փիս տղա չի, վոր

ուղենար, նա ինձ փիսություն կաներ, համա-
չե, Պեծիկին բերեց սադ-սալամաթ կապեց»:

Եղ ինձ ավելի յեր կակղացնում: Առաջին
անգամն եր, վոր յես եղբան յերկար ինքս ինձ
հետ խոսեցի. Հովանի խոսքերը մի կողմից եյին
միտս գալիս, իմ արարքները մի կողմից:

Շուռ եյի գալիս ես կողքիս, են կողքիս.
«Եսքան բանից հետո Հովանն ել ինձ կարա սի-
րի»: Մեկ ասում եյի՝ յես մեղավոր չեմ, մեկ
ել աչքիս տռաջ եր գալիս թրջված Հովանը,
սիրտս վատ եր գառնում: Եղ սհաթը ուզում եյի
վոր նանս հետս խոսեր: Նանիս քունն ել եր
փախել, համա ձեն չեր հանում, ասեցի.

— Նանի:

— Եղ ի՞նչ ա, նարգն, իսի՞ չես քնում,—
հարցրեց նա:

— Նանի ջան, քունս չի տանում,—ու քիչ
եր մնում յերեխի պես լաց լինեյի:

— Նանի, քեզ վժնց են մարդի տվել...

— Ի՞նչ ես հարցնում, բալա ջան, վոչ իմ
ուղելն են հարցրել, վոչ չուզենալս, տարել են
ու տղի ծոցը գրել. ըտենց եմ մարդի դնացել:
Ինձանից ուր ես հարցնում, մենք ուրիշ եյինք,
դուք ուրիշ եք: Մի գլուխ կեսրանցս տանը
ջահրա եյի մանում, ընդուր աչքերս ըսենց քո-
ռացան: Հայվանի պես բաներ եյինք, թէ կտա-
յին՝ կուտեյինք, թէ չեյին տալիս՝ զլուխներս

կախ մեր գործին եյինք...

Յես խղճում եյի, շատ եյի խղճում նանիս:
Սուս եթ մնում, հրում եյի նրա կողքին—
Նանի, դե ասա ե:

— Ի՞նչ, — հարցնում եր նա բեզարածի պես:

— Նանի, քու մարդը քեզ սիրում եր:

— Յես ի՞նչ գիտեմ, մազաւ մարդիս հետ խռո-
սացել եմ: Աղաթ եր, եղակս եր, հա, կտրվեր...
Աղջի, ասու, քու մտքումը մի բան կա:

Յես ասում եյի...

— Զե, նանի, եսոր քունս չի տանում:

«Իսկ մենք, մենք հո եղակս չենք»—ուրա-
խանում եյի յես:

Մինչև յես մի անգամ շնչում եյի, նանս
յերկու անգամ եր շունչ քաշում. մինչև յես
տաս անգամ շուռ եկա, նա սուս մնաց մի կող-
քի վրա:

Առավոտը դես դիպա, դեն դիպա, դործով
յեղա ու դիշերվա մտածմունքները մոռացա:

Յես չասեցի, վոր հովանը եդ մի քանի
տարվա մեջ, շատ եր առաջ գնացել. խելքա-
հաս եր, վոր գեղի բոլոր գործերի մեջ եր լի-
նում. ընկերները նրան շատ եյին սիրում, մի-
նակ յես եյի նրան չարչարում:

Զոլի տղա, սիրով լեն, եհ, մի անգամից
մի անգամ սիրով կպել եր: Յես ուրիշ տեսակ
եյի նրան հասկանում, նա ինձ՝ ուրիշ տեսակ՝

թե վոր յերկուսս ել մի տեսակ հասկանայինք,
եղպես չեր լինի:

Յես, վոր գիտեյի ինձ շատ ա սիրում, ինձ
համար գժվում ա, յերես եյի առել... մարդ
իրա խելքիցը շատ բան ա կորցնում:

Վերջինն ա, ասեմ պըծնի:

Մեր տան առաջին ցանելու հող ունեյինք,
մերս միշտ բոստան եր ցանում: Պետք ա, վոր
մի բանով ապրեյինք, յես հենց շատը նանիս
համար եյի մտածում:

Գարունքվա սրսուռ առավոտ եր. մինչև ի
ճաշ ուրիշի համար գործ արի, իսկ ճաշվանից
մինչև իրիկիապահ քանդում եյի բոստանի տե-
ղը: Նանս նստել եր կողքիս. կոշտ հողերը ձեռ-
քումը տրորում եր ու ձեռքի տակ ընկած քա-
րերը շպրտում:

Մութն ընկավ ու կիսատ մնաց բանդա:
Նանս ասեց՝ թեղ քնի, վոր առավոտը թեղ
զարթնես:

Լուսնյակ գիշեր եր. լիսն ընկել եր աչքե-
րիս. յես պինդ քնած եմ յեղել:

Առավոտը շատ թեղ վեր կացա, մի բուռ
ջուր տվի յերեսիս ու վաղեցի քանդելու. ի՞նչ
տեսնեմ, վոր բոստանիս տեղը քանդած, պըծնած.
բանն ել կողքին վեր գցած: Վոնց վոր մեխված՝
ըտենց տեղումս կանգնել եմ. վոչ առաջ եմ
գնում, վոչ տունն եմ գնում. աչքերս տրորում

եմ՝ թե հո սա յերազ չի՞, համա տեսնում եմ
չե, լույս որ ա, գետինն ել շիտակ փորած ա:
Հիմի ասում եմ՝ սա ինձ լավություն են
արել, համա ի՞նչ մտքով ա, ի՞նչ կա սրա մի-
ջին... հենց կուցա բահս վերցնեմ, տեսա կող-
քին մի սպիտակ թղթի կտոր ծալած: Բաց եմ
անում, միջին գառան աչքի չափ մեծ տառե-
րով գրած ա:

Յես մի տարի կիսատպություն ուսումնարան
եյի գնացել, կարդալ գիտեյի, զուով իրար եժ
բերում ու կարդում.

«Նարգո ջան, բոստանդ կցանես ու ինձ միտդ
կցես: Յես միտքս փոխեցի. զնում եմ բաղար.
ել ով գիտի՝ յեփ կզամ:

Ինչքան վատություն արիր ինձ, յես սիստ
չեմ պահում, դու միտդ կպահես:

Մնաս բարով:

Հովան»

Վանց վոր սիրաս շուռ յեկավ, թուղթը ձե-
ռիս դողում եմ. զրերը մեծանում են, մեծա-
նում ու աչքերիս առաջ բռնում: Վանց վոր Հո-
վանին սրտիցս պոկեցին, սիրաս ընենց ճվաց.
Հիմի եղ քանդած հողն ուզում եմ լիզել: Բուկս
խեղղվում ա, ուզում եմ լաց լինել ու չեմ կա-
րում:

Ել նանիս բան չասեցի, վազում եմ նրանց
առւն, վոր գեղի զբաղումն ա, զնում եմ Հովա-
նին ասեմ՝ վոր բեզ առնում եմ...

Վոչ Պեծիկն ա աչքս գալիս, վոչ նանս,
վաղում եմ Նրանց տանն եյի մոտենում, սիր-
տս արփարփում եր։ Շշկլված թռչունի պես
դիպա նրանց դռնովն ու կանչում եմ։

— Հովմն։

Զեն չկա, մորն եմ կանչում։

— Այ մոքիր։ — Պատասխան չկա։

Հարևանի կնիկը դուրս յեկավ։

— Աղջի, ուժ ես ուզում։

Ասեցի։

— Այ քեռակին, սրանց բան պիտի ասեմ։
Եդ կնիկն ել արխային պատասխանեց։

— Աղջի ջան, յետացել ես, հլա մութ-
մթան եր, վոր նրանք՝ մեր ու աղա ճամբա-
ընկան։ Հովմնի ընկերուիքն ել եյին յեկել։ Հիմի
նրանք հասած կլինեն կարմիր Գյոլին։

Թեերս թուլացան, ուժս պակսեց ու եդ
ժամանակ ամեն մի յերեխա կարող եր ինձ վեր
գցել։

— Աղջի ջան, խի յես կանգնել — հար-
ցնում ա հարեանի կնիկը կասկածանքով։

Ասեցի։

— Հեծ, քեռակին, գլուխս պախտ յեկավ...

Մտիկ եմ տալիս նրանց տանն ու դռանը,
նրանց են քարն ել քաղցը ա թվում։

Մի պուճուրիկ զաղարիկո ունեյին, հետները
չեյին տարել վաղեց, ինձ վրա հաջում եր. յես

տեղիցս չեյի շարժվում, մտիկ եյի տալիս աչքերին:

Կասես շունն ինձ հասկացավ ու յեկավ վոտներիս առաջին նստեց: Հիմի ուղում եմ, վոր շան հետ խոսեմ, հարցնեմ.

— Զաղարիկո ջան, Հովհանն ուրախ երգնում, բա քեզ ինչի՞ թողեցին, մեղք չե՞ս, — ասում եմ ու վոտքով պոչի հետ խաղում. զաղարիկոն համ մռում եր, համ չեր կծում:

— Ես վատություն եր, ես ամենից շատ վատություն եր. Նրան ով եր ասում, վոր իմ գետինը փորեր, Նրան ով եր ասում ինձ թուղթ դրեր. հիմի ել ինքն ինձ սիրացրեց ու զնաց...

Շունը մռում եր, յես շշնջում եյի եղաղես:

— Բուշու, բուշու կանչելով՝ շանը հետևս զցած տուն յեկա, հաց տվի շանը. ուտում եր: Ասա, Նարգո, դու յե՞րբ եյիր եղքան բու դրությունիցը խռոված:

Սիրտս կոտրված եր. ասեցի.

— Նանի, Հովհանն ու մերը զնացել են...

Եղքան ասեցի մենակ, չեյի ուղում նանս ավելին իմանար, նաչար եր:

Գնացի Պեծիկի մոտ ու գլուխս դրել եմ նրա ուսին, վո՞նց եմ լաց լինում: Աչքերս քսում եմ Պեծիկի աչքերին, վոր նա ել ինձ հետ լաց լինի. ասում եմ.

— Աերս պրծավ, համա սիրածս գնաց: Պեծիկ ջան, խի՞ չեյիք ինձ խրատում, վոր ըտենց չվարվեյի: Ախր Հովաննն ինձ համար լավ եր, ինչի՞ չեյի իմանում:

Նայում եմ Պեծիկի աչքերին, ելի պատկերս յերեսում ա նրա աչքերում, բայց արտասունքս յերեսում:

Նոր իմացա, վոր յես Հովանին սիրելիս եմ յեղել ու ինքս չեմ իմացել. Են ժամանակ արխային եյի, գեղումն եր ու ինձ սիրում եր... Հիմի գլուխս ծռել եյի:

Հալբաթ շատերի հետ ա պատահել ու շատերը կիմանան, մարդ ինքն իրա սիրտը դժար ա հասկանում:

Երա ընկերներից իմացա, վոր գնացել եր բաղաք և գործ անելու, և' սովորելու, վորով հետեւ շատ առաջ գնալու ցանկություն ուներ, մեկ ել հալբաթ ուզել եր ինձ դաղել...

Պետք ե ասեմ, վոր յես կոմսոմոլում Հովանից յետ չեյի, ինչքան գործ նա յեր անում, ենքան ել յես եյի անում:

Յես բարիշեցի իմ գրության հետ, աշխատանքն ու կոմսոմոլն ավելի սիրեցի, քանի վոր Հովաննն ել եղ ճանապարհով եր գնում.

Յես մեծացել եյի, ընդուր ել եղբան տան-ջանքներ ունեցա: Լուրջացել եյի ու կարգին հասկանում եյի խորհրդային իշխանության

նպատակները։ Գիտեյի թե մեր դասակարգն ո՞վ ա, ու յես պետք ա մեր դասակարգի հետ լինեյի. վոտս հաստատ դրի գեր իշխանության ճամբի վռա։ Խորհրդային իշխանությունը բոյ եր քաշում, մենք ել հետը բոյ եյինք քաշում. կոմսոմոլը մեծանում եր։

Յես Հովանին չեյի մոռանում, միտս եր ընկնում են, վոր փորում եյինք զետինը ու յես նրան եյի մտիկ տալիս, նա՝ ինձ նա ծիծաղում եր, յես՝ խեթում, բայց յերկուսս ել մի նպատակով եյինք փորում. ո՞վ ամենից շատ կըանդեր, ուզում եյինք իրարից առաջ ընկնել... հիմի յել չեմ մոռանում, բանում եյինք ու իրար մտիկ տալիս։

Անհամբեր սպասում եյի Հովանին, ասում եյի, մի որ իրար կոտտահենք. յես իրան կտսեմ, ինքը՝ ինձ ու իրար կհասկանանք, եղ մտածմունքով ավելի եյի սիրտ առնում։

Իմանում եյի, թե Հովանը շատ ա առաջ գնացել, ասում. եյի՝ յես ել պետք ա առաջ գնամ։

Մի տարի հետո կուսակցությանը դիմում ավեցի ու ինձ ընդունեցին։ Կուսակցական դարձա, հիմի արդեն ավելի լուրջ եյի ու խելքահաս մարդ։

Ինձ գյուղիսորհուրդի անդամ ընտրեցին, գյուղիսորհուրդի նախագահի թույլ գործունեյությունն ու են, վոր կուլակին պաշտպանում եր՝

գեղացոց տռաջ բաց արի, մինչև հիմի նա ինձ
հետ վատ առ շատ վատ: Յես Հովանին սի-
րում եյի, խելի մտքովս չեր անցնում ուրիշի
վրա աչք դնեմ: Վոր ըտենց չսիրեյի, կամ փիս
մտքեր ունենայի, եդ գյուղիորհուրդի նախա-
գահին սիլա չեյի տալ:

Ժողովից հետո իրար հետ դուրս յեկանք,
ինձ առում եր.

— Արի, համաձայնվի...

Իսքը կնկա, յերեխատեր մարդ:

Եդ ասեց ու տեսավ—շպացրի, ձեռս մըղ-
կտաց, ասա՝ հո մեղավոր չեյի... կարող եր ձեն
հանել, մինչև եսոր նա ինձ հետ ընկած ա:

Են ել ասեմ, վոր անժարդ կնկա յետեից
շատ են պտտվում: Եսոր, եգուց սպասում եյի,
թե Հովանը կդա, խաբար կզրկի:

Մի տարի սպասեցի, եդ մի տարում նանս
մեռավ, հետո Պեծիկը թոլ ելավ սարիցն ու
սատկեց, այն ինչ մտածում եյի նրան գյուղա-
տնտեսական կոռպերացիայի մեջ գցեմ: Մնացի
մեր հին տանը մենակ, չեյի ուզում, վոր տանը
նստեյի: Մեր գեղացի փիս կնանիքն ել բամ-
բասում եւին, թե խի՞ չի մարդ անում, պոչը
խուզած ման ա գալիս:

Վերջապես մի որ մեր գեղացի մի տղի
հետ Հովանը նամակ եր զրել:

Նամակը տվեց ինձ, ուրախացել եմ, ինչ-

բան եմ ուրախացել, նամակը բաց չեմ անում:
Գրել եր.

«Ընկեր Նարզո,

Յես ես բաղաքումը բանվորություն եմ անում
ու բանվակում սովորում եմ: Յես չուզեցի յերկար
սիրահարված մնալ, ժամանակ չունեյի, են ժամա-
նակ շատ ջահել եյինք. ամուսնացել եմ, կարող ա
վոր դու ել ես ամուսնացել, յես չգիտեմ: Մենք
կմնանք վորպիս լավ ընկերներ:

Կոմբարելիներով, քո ընկեր՝

Հովան»:

Հենց դիտես առաջվա պես մղկտացի՞, ես
անդամ սիրաս պնդված եր, յես ինձանից դար-
մացա: Հալբաթ մարդի սիրտ մի անդամ ա
մղկտում, ես անդամ վոչ մղկտոց, վոչ դարդ
արի, ասեցի՝ ես ինչ թափուր շաշություն ա,
յես ինչի՞ յեմ սպասում, Հովանի նման ես աշ-
խարհքումը չկա, նա, վոր ինձ նմանը ճարել ա,
յես ել նրա նմանը կճարեմ: Եդ ժամանակ ել
Արմոնը (հիմիկվա մարդս) ինձ դուզ յերեսիս
ասեց՝ «Արի ամուսնանանք».—«բա ինչի՞ չամուս-
նանամ»—ասեցի յես: Դու վոր ըտենց ես
զըռում, յես ել ըսենց կանեմ. ինչի՞, կնիկար-
մատ եմ՝ խեղճ մնամ:

Ասեցի, թող իմանան, վոր սիրել ել դի-
տեմ, մոռանալ ել:

Առանց յերկար ու բարակ սիրահարվելու
Արմոնի հետ ամուսնացա: Նրա առաջվա կնիկը

մեռել եր, մի հատ ել յերեխա ուներ, ինքը լավ
կուսակցական ու գործ անող մարդ ա:

Հիմի քեզ խոստովանում եմ, սրան ել շատ
եմ սիրում, ընդուր վոր մի ծրագրով ենք դը-
նում. վոչ յես եմ նրան հակառակ, վոչ նա ինձ:
Ու հիմի տեսնում ես, ըսենց ուրախ նստել եմ
կողքիդ. մինակ վախում եմ, վոր քո դլուխը
շատ ցավեց ես յերկար պատմությունից:

Այ, բախտը յես դրան եյի ասում, վոր շատ
ժամանակ ինքը չի ուզում, վոր ըսենց ըլի, հա-
մա ըսենց ա ըլում:

Բան չեմ ուզում, մինակ մի անգամ պա-
տահեմ Հովանին, յերես յերես իրար մտիկ տանք,
իրար հետ խոսանք, վոնց վոր հին ընկերներ:

Նա վերջացրեց իր պատմությունը:

— Նարգն, — աղաղակեցի յես, — Նարգն,
ձեռքդ տուր. — և յես սեղմեցի նրա ձեռքը:

Ինքը, Նարգոն այնպես հանգիստ եր, այն-
պես անվրդով, կարծես այդ պատմության հե-
ղինակն ինքը չեր:

— Նարգո, յես շատ բան իմացա քո պատ-
մությունից:

Նա ժպտում եր ինչպես միշտ ու զարմա-
մացած եր:

— Նարգն, քեզ ճանաչում ե՞ ընկեր Լենի-
նը, — տսեցի յես ու նայեցի նկարին:

Նարգոն ամաչեց, յերեսը շուռ ավեց:

— Ի՞նչ ես ասում, ընկեր Լենինն ինձ վորտեղից ա ճանաչում, յես ի՞նչ եմ, վոր...—ճընշված ու յերեխայամիտ տօնով ասեց նա:

— Հենց հիմի, Նարգի, նա քեզ ճանաչեց, մտիկ տուր, Տիժաղում եւ:

Նարգոն նայեց, ինքն ել ծիծաղեց:

— Յես ուզում եմ ընկեր Լենինին լավ ճանաչել. ինքը թող չճանաչի ինձ:

* * *

Նարգոն գնաց: Յես յերկար խորհրդածություններ ունեցա, վորի մասին չեմ ուզում առել, ժամանակս կարճ եւ:

Մի տարի և կես այդ շրջանումն եյի, չեյի ուզում բաժանվել իմ աշխատանքից, իմ գեղջկուհիներից. բայց հիվանդության պատճառով հարկադրված եյի թողնել շրջանն ու տեղափոխվել քաղաք:

Այժմ ուզում եմ պատահել այն կուսակցական ընկերներին, վարոնք զլուխները պտտում եյին մեր աշխատանքների մասին, ուզում եմ այժմ նրանց հետ փաստերով ու սեփական փորձից խոսել:

Հավատացնում եմ ձեզ, գյուղը փոխվել է, շատ ե փոխվել. ով մոտիկ ե յեղել ու նրանց մեջ յերկար ե աշխատել, նա կիմանա: Յես իմ աշխատանքի համար ուրախ եմ:

Դեռ Նարգոն առաջինն ե, վորի մասին յես

պատմեցի, վորովհետև իմ առաջին բարեկամությունը նրա հետ հաստատեցի, Դեռ քանիսները կան, վորոնց պատմությունը յես հավաքել եմ, ինչքան գեմքեր կան, վորոնք հաճախ գալիս են իմ աչքերի առաջ: Հավատացնում եմ ձեզ, այդ գեղջկուհիներն արդեն հասկանում են մեզ և ուղում են կուլտուրական լինել:

Յեթե հանդիպենք, մյուս անգամ ելի կպատմեմ, այժմ անկուսակցական գեղջկուհիների լյանըից՝ ավելի ու ավելի հետաքրքիր բաներ:

Մենակ խնդրում եմ, յեթե կարող եք, նարգոյի մասին զբեք, թող շատերը ճանաչեն նրան:

Այսպես վերջացրեց կին բաժնի շրջանացին հրահանգչուհին, ու մենք բաժանվեցինք:



Գրառեպ. № 814 (բ) տիրաժ 1500 է. № 796
Հայոց պետական գրադարան Յերևան № 3688

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044744

404]

A 8094



ԳԻՆՆ Ե 60 ԿՈԴ.